



7744





24 SEP 2006

ԱՆԴՐՎԵԼ ԽՄՍՈՒՆԻՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

14 NOV 2009


Վ-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1927 թ. նոյեմբ. 22-ի առավոտյան նիստը

ՀԿԿ(Բ) ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ



ԸՆԿ. ՄԱՄԻԱ ՈՐԱԽԵԼԱՇՎԻԼԻ  
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ



Թիֆլիս - 1927



## Անդրկովկասյան Ֆեղերացիայի նշանակությունը

Հնկերներ, Անդրկովկասյան Ֆեղերացին կոմիտեյի հաշվեավությունը 1927 թվին՝ չի կարող լինել միմիայն հաշվեավությունը այն ժամանակամիջոցի համար, վոր անցել է Անդրկովկասյան կոմմունիստական կազմակերպությունների վերջին համագումարից հետո:

Այս տարի մի քանի թվականներ գուգաղիպում են և ստիպում են մեզ հաշիվ տալ կուսակցության ու ամբողջ յերկրին այն աշխատանքի համար, վոր Անդրյերկկոմը (նախկին ՌԿԿ (Բ) Կենտկոմի Կավճյուրո) լիովին ներդաշնակ Վրաստանի, Աղբքաջանի և Հայաստանի կուսակցական կազմակերպությունների հետ, լիովին ներդաշնակ մեր կուսակցության ազգային քաղաքականության ընդհանուր գծի հետ՝ կատարեց սրանից հինգ տարի առաջ, իրադրության Անդրկովկասյան Ֆեղերացիան, վորպես Ա.Ս.Ցիշ:

Այս հնգամյակը՝ տրոցկիստական ոպողիցիայի հերոսարանների աշխատանքի բերմունքով, (մի ոպողիցիա, վոր փորձում և կոմմունիստական կուսակցության մեր Լենինյան ծրագրին հակագրել մի փաստաթուղթ, «Բոլեկիկ-Լենինյանների պլատֆորմը» (ոպողիցիայի) կոչված)՝ ստիպում և մի հետադարձ ակնարկ նետել և ի մի գումարել Անդրկովկասի ազգային շինարարության, առանձնապես նրա ամենից ավարտված ձեր՝ Անդրկովկասյան Ֆեղերացիայի արդյունքները:

Այս հերոսարատական պլատֆորմի մեջ մեր Փեղերացիային բավական ուշադրություն և հատկացվել՝ շեշտված ցանկությամբ վարկարեկելու Անդրկովկասյան Ֆեղերացիայի ձեռվ դոյություն ունեցող՝ Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական այս համագործակցությունը:

Պլատֆորմի մեջ պատերազմ և հայտարարվում Փեղերացիային, բայց արդեն վոչ թե նրանց բերանով, վորոնք այստեղ 5-6 տարի առաջ պայքարում եյին Փեղերացիայի դեմ, վոչ թե վրացական կամ աղբքեջանական ուկոնիստների միջոցով, այլ հակալենինյան

արոցկիստական բանակի «Ճախ-Ճախագույն» ոպոզիցիոներների կողմից:

Պատփորման հարց և դնում «ստուգելու» Անդրկովկասյան Ֆեդերացիայի արդյունքները, թե Քեդերացիան վորքան և համապատասխան Անդրկովկասյան ժողովուրդների քաղաքական, տընտեսական և կուլտուրական շահերին: Հասկանալի յէ, վոր սա մի փորձ և վարչաբեկելու այն, մի փորձ և դնելու ֆեդերացիայի լուծարքի հարցը: Սա մեկն և հակալենինյան խմբակցության ծրագրային գրություններից:

Այսպես, մեզ ստիպում են յետ նայել, և այն զրագրությունը, վոր անում են նրանք, վորոնք սայթաքվելով հասել են և դաշն կապել բոլոր շովինիստական տարրերի հետ, պետք և հակադրել մի համառոտ անալիկ այն բանի, վոր ձեռք ենք բերել ֆեդերացիայի հինգ-վեց տարվա գոյության և այդ ֆեդերացիայի հիմքում դրված ազգային խաղաղության ամրապնդման հետեւանքում:

Ինչպես ե դրված ֆեդերացիայի հարցը մեր ծրագրի մեջ, լեռնիզմի սիստեմով՝ Լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքում կա մի ամբողջ գլուխ՝ նվիրված այդ հարցին: Լենինը մեկնաբանում է Ենգել-ին, վորը քննում և ֆեդերատիվ հանրապետության հարցը՝ կապված ազգային հարցի հետ: Ենգելը վրում եր. «Ըստ իս, պրոլետարիատի կարող և գործ ածել միայն միասնական և անրաժման հանրապետության ձեր: Ֆեդերատիվ հանրապետությունը գեռ հիմա ել հանդիսանում և ընդհանուր առմամբ և ամբողջապես անհրաժեշտություն մի այնպիսի հսկայական տերիտորիայի համար, ինչպես Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգները, թեև Արևելքում այդ դասում և արգեն խոչընդոտ: Դա մի քայլ առաջ կլիներ Անգլիայում, ուր յերկու կղզիներում ապրում են չորս ազգ: Այսպիսով, Ենգելը գտնում է, վոր միասնական անրաժման, ունիտար հանրապետությունն ամենից ավելի յե համապատասխանում պրոլետարիատի շահերին, բայց յերբեմն լինում են հատուկ պայմաններ, վորոնք ֆեդերատիվ միությունը, ֆեդերատիվ հանրապետությունը դարձնում են անհրաժեշտ, վորպես անցման ետապ դեպի կատարյալ միասնականությունը: Այս հատուկ պայմանները ԽIX դարում կային ուույնիսկ Անգլիայում, ուր յերկու կղզու վրա ապրում եր չորս ազգ: Ուստի Ենգելը ֆեդերատիվ իրավակարգն այսուեղ համարում եր մի քայլ առաջ,

գնահատվում եր վորպես պրոգրեսիվ հեղափոխական աղդակ, վոր աղդում և պրոլետարական շարժման ընդհանուր ճակատագրի վրա:

Ինչպես եյին պայմանները ժողովուրդների այն բանուում, վոր հանդիսանում եր ցարական Ռուսաստանը: Այստեղ պետք և ուշադրության առնել այդ բանուում ընկած ժողովուրդների պատմական ճակատագրի միջն գոյություն ունեցող տնտեսական կուլտուրական մակարդակների խոշոր անհավասարությունը, հատկապես վելիկոդեմական ազգությունների և յենթակա ստրկացած ազգությունների միջև: Նման պայմաններում, իհարկե, ֆեդերացիան, պետության ֆեդերատիվ իրավակարգը՝ նվաճված պրոլետարիատի կողմից մի հսկա քայլ կլիներ գեպի առաջ: Մենք գիտենք, թե Ենինը, վորը նույնպես միասնական հանրապետությունը համարում եր ամենահամարը պրոլետարական շահերի, պրոլետարական հեղափոխության համար, Ռուսաստանում պրոլետարիատի հաղթանակից հետո զրեց ցարիզմից և բուրժուազիաց ազատված Ռուսաստանի ֆեդերատիվ կառուցման հարցը:

Իսկ ինչպես եյին հատուկ պայմանները Անդրկովկասում: Այստեղ մենք ունեցինք բոլոր նախադրյանները Անդրկովկասի, Սև և Կասպից ծովերի միջև յերկարող այս ժողորիկ կորրիդորի, և Արևելքի այս նախագուան՝ ֆեդերատիվ կազմակերպման համար. սակայն բացի սրանից մենք ունեցինք լրացուցիչ պայմաններ, վորոնք նույնպես թելագրում եյին մեզ Անդրկովկասյան ֆեդերացիա:

Վորոնք են այդ պայմանները. դա—հանրապետությունների փոխադարձ ստարացումն եր, վոր ստեղծվել եր այստեղ նախկին ուժիմի կողմից, թե ցարական և թե մենշևիկ-դաշնակ-մուսավաթական: Կային ժողովուրդների փոխադարձ ատելության տարրեր, վոր արհեստական կերպով հրահրվում եր, և վոր այնուամենայնիվ փաստ եր: Սրա հետևանքով մեզ մոտ իրական եյին վորոց յերկուողներ Անդրկովկասի բոլոր ազգությունների և ցեղերի առջեց ընթացող այս կամ այն հիմնական աղդա-թյան կողմից վելիկոդեմական տեսնղենցների հայտարկրման հնարավորության առթիվ: Փորդանիստն յօւրատեսակի իրավացի յեր, յերբ Անդրկովկասյան սեյմում ասում եր, նկատի ունենալով Անդրկովկասյան պայմանները, թե փոքրիկ ազգություններն ես կարող են դնել իրենց առաջ վելիկոդեմական նպատակներ: Տվյալ գեպառում հենց սրա բերանով խոսում ե ձմարտություն այնչափով, վոր չափով նու և նրա գեկավարած պետությունն ու կուսակցու-

թյունն իսկապես ունեցին վելիկողերժավական տեսնդենց Անդրկովկասի այլ ազգությունների վերաբերմամբ:

Ընկերները հիշում են, վոր ֆեդերացիայի հարցը ժամանակագրականորեն զուգադիպեց այն մոմենտին, յերբ Դարսում մենք բանակցություններ եյինք վարում թյուրքական կառավարության հետ: Այստեղ մենք սեալ կերպով դեմ առ դեմ կամունեցինք մի այնպիսի դրության, վոր կարող եր վճռվել մեզ համար առավելացիայի դրության, վոր կարող եր վճռվել մեզ համար առավելացույն ոգուառվ միմիայն այն դեպքում, յեթե մենք միացած, վոչ թե բաժան բաժան մի յերկիր լինեցինք, յեթե Աղքարեջանը, Հայաստանը և Վրաստանը ներկայացնեյին մի ամբողջություն: Միմիայն այդ գեղքում մենք կարող եյինք հույս ունենալ հաշտության պայմանագրի, վորը մշակելու և ստորագրելու համար գնացել եյինք Դարս, առավելացույն չափով նպաստավոր պայմանների վրա:

Այն գիտակցությունը, վոր պետք ե, ինչ գնով ել լինի, ունենալ քաղաքական, տնտեսական, ուղմական և այլն հաստատում միություն—ազգային հաստատում խաղաղություն ձեռք բերելու, մեր հանրապետությունների վերածնունդի նորմալ ստեղծագործական աշխատանքի համար նախնական բոլոր պայմանները ստեղծագործական աշխատանքի համար նախնական բոլոր պայմանները ստեղծագործական աշխատանքի համար նախնական բոլոր պայմանները ստեղծագործական աշխատանքի համար այս գիտակցությունը թափանցում եր մեր բոլոր վորոշումների մեջ մեր հանրապետությունների խորհրդայնացման մոմենտից սկսած:

## Անդրքենդերացիան հիմքն և ազգային բարորության

Տակավին, Անդրկովկասի խորհրդայնացման սկզբնական շրջանում՝ 1921 թվի ապրիլին, Լենինը հեռագրեց մեզ. «Համառորեն պահանջում եմ ստեղծել յերկրամասային տնտեսական մի որդան ամբողջ Անդրկովկասի համար»:

Հետո, ընկ. Մյասնիկյանի միջոցով զրկած նամակով ավելի մանրամասն կերպով ուղղեց մեզ գեղի այդ կողմը:

Լենինի ցուցմունքներն առաջադրում եյին ոգտագործել միջազգային նոր կացությունը, վոր ստեղծվել եր մեր հանրապետությունների շուրջը, ոգտագործելու կապիտալիստական Յեղուպայի այն հնարապորությունները, վոր բացիկ եյին Անդրկովկասի հանրապետությունների առջև, վորոնց այնքան բոյկոտի

չեր յենթարկել միջազգային իմպերիալիզմը, վորքան ՌՖՍԽ Հանրապետության:

Հասկանալի յի, վոր առավելագույն չափով ոգտագործելու համար այդ հնարավորությունները՝ մենք հանդես գայինք միացյալ հակատով, մենք պետք ե, առաջին հերթին, արտաքին առևտրի համար ստեղծելինք այնպիսի մի որդան, վոր ներկայացներ մեր բոլոր հանրապետությունները վորպես մեկ ամբողջություն, վոր մեզ հնարավորություն աար խուսափելու տնտեսական ստրկացման վատանգից՝ կապիտալիստական յերկրների կողմից:

Լենինը պնդում եր Անդրկովկասի համար միասնական տընտեսական մի որդան ստեղծելու վրա, պայմանով, վոր նա լիներ վոչ թե պարզապես տնտեսական գիտարան, այլ ղեկավարող սկզբունք մեր տնտեսական կապերի մեջ՝ կապիտալիստական Արևմուտքի հետ: Լենինի ավանդած՝ ուղղութուն տվող այս գիծն իր ժամանակին չանցկացվեց: Հենց այս հարցի առթիվ՝ արտաքին առևտրի, մեր յերկաթուղիների միացման և այն գծով՝ մեր կուսակցության մեջ առաջ յեկավ այն հոսանքը, վոր ըստացավ վրացական և աղբբեջանյան ուկլոնիզմ անունը:

Այստեղ պետք ել լինում ձեզ հիշեցնել, վոր մենք տակավին 1921 թ. հունիսի սկզբին, իր ամբողջ լայնությամբ պետք ե գնեյինք այն հարցը, թե — վերն և Անդրկովկասի կոմմունիստական կազմակերպությունների ուղին. արդյոք գիծը բռնելու յենք դեպի մեր՝ անցյալում անջատ հանրապետությունների առավելացույն ինքնուրայնությունը, կամ թե, նկատի առնելով ոյալ կացությունը, հաշվի առնելով՝ մասր բուրժուական տարբերին փորոշ զիջումներ անելու անհրաժեշտությունը, իրագործում ենք մեր կոմմունիստական ծրագիրը: Վոր կայանում ե կացության թույլատրած առավելագույն կապեր, առավելագույն միասնականություն հաստատելու մեջ: Կովկասյան բյուրոն ամբողջ Անդրկովկասի պրոֆմիութենական, խորհրդային և կուսակցական պատասխանատու աշխատավորների հետ համախորհուրդ, ընկ. Ստալինի ներկայությամբ, հուլիսի 2-ին քննեցին այդ հարցը: Խորհրդակցության ժամանակ արձանագրեց այն փաստը, վոր մեր հանրապետությունների մեջ կան մի քանի խումբ ընկերներ, վարօնք նայում են Անդրկովկասյան հանրապետությունների միության վրա այլ կերպ, քան թելադրում ե մեր ծրագիրը: Կավբյուրյի 1921 թ. հուլ. 2-3-ի բանաձեկ մեջ ասված ե. «Կավբյուրյն նշելով դեպի նացոնալիզմը յեղած թեքման փաստերը, հայտարերված

արտաքին առևտրի, հանրապետությունների սահմանավորման, մաքսատների և կոնսուլային կետերի վարչության հարցերում, առաջարկում և Անդրհանրապետությունների կոմիտեների կենտրոնական խամացության բոլոր ներկայացուցիչներին՝ նման հարցերը լուծելիս բացառապես մեկնակետ ունենալ այդ հանրապետությունների աշխատավոր մասսաների յեղայրական կապի շահերը»։ Հենց այստեղ պետք է հիշել, վոր մի խումբ ընկերների, զիմավորապես բազվեցիներ, չբավարարեց Կավրյուրոյի ընդունած այս ձևակերպումը։ Այս խումբը մտցրեց լրացուցիչ մի կետ-ուղղում, վորն ասում է.

«Մեկնակետ ունենալով այն, վոր

1) Անդրկովկասում խորհրդային, եյապես ինտերնացիոնալիստական, իշխանություն համատափելու մոմենտից բոլոր հանրապետությունների գեկավար կոմիկադմակերպությունները միջոցներ ձեռք չեն տոել յրելու նացիոնալիստական այն ուգարք, վոր յերկար տարիների ընթացքում համառորեն հրահրվել և շովինիստական բոլոր կուսակցությունների (գաղնակների, մենշեկների, մուսավաթների) կողմից, և գործանականորեն ինտերնացիոնալի վրայով լուծված չեն յեղել հայ վաճառականների և բուրժուաների, թյուրքական բեգերի և վրացական աղնվականների վիճելի հարցերը, և վոչ միայն չեն լուծվել, այլ և մնում են ցարդ վիճելի, ինչ վոր ավելի ևս ուժեղացնում և անտագոնիզմը յերեք հանրապետությունների աշխատավորների միջև։

2) Արձանագրելով նացիոնալիստական «կոմմունիստական» խմբակցությունների կազմության փաստը Անդրկովկասի կազմակերպությունների մեջ, ավելի ուժեղ՝ Վրաստանում և Հայաստանում, և թույլ՝ (քանակով ուշվորակով) Աղբերեջանում, և մեր կազմակերպությունների յերկու մասերի բաժանվելու փաստը, վորոնք մզում են զուտ քաղաքական պայքար մեկը մյուսի դեմ, վորի մասին կան նյութեր և փաստաթղթեր, և համուռ են մինչեւ այն, վոր ներկուսակցական պայքարը փոխադրում են բանվորների և զյուղացիների անկուսակցական մասսաների մեջ, — գտնելով, վոր տվյալ մոմենտին կուսակցական և խորհրդային կազմակերպությունները՝ նացիոնալիստ-կոմմունիստների ուժեղ ազգեցության հետևանքով ապրում են կրիզիս, վորի հետեանքով փոխանակ համերաշխ աշխատանքի՝ զարգանում և յերկու խմբերի քաղաքական գրակցիոն պայքարը, ուժեղանում և տնտեսական բայրայումը, վոչնչանում և ինտերնացիոնալիզմը, մի խոսքով, կազմակուծ-

վում և կուսակցական կազմակերպությունը, — Անդրկովկասի պատասխանառու աշխատավորների խորհրդակցությունը վորոշում և գումարել Անդրկովկասյան, կոնֆերմանցիա Ռեկ գենտումի ներկայացուցիչների հետ համախորհուրդ, կոնֆերենցիայի որակարգում դնելով հետեալ հարցերը. 1) Մեր կուսակցության տակտիկան և քաղաքականությունն Անդրկովկասում. 2) Կուսակցության գրությունը (նացիոնալիստական թեքումը, Փրակցիոն պայքարը և այլն), և 3) Անդրկովկասյան հանրապետությունների վոխհարաբերությունները իրար՝ և ՌՍՖՌ հետ։

Հատկանշական և հետեալ վաստակ. Կավրյուրոյի վորոշման լրացուցիչ այդ կետը ստորագրվեց ներկա ոպողիցիայի «Վունդերկենդիգի» (հաշը-յերեխա) Սարգսի կողմից։ Հիմա այդ ուղղումի հեղինակը միացել է նրանց հետ; Վորոնք այն ժամանակ նրա կողմից վորակվեցին վորակեալ կոմմունիզմից շեղվող, շովինիստներին և ազգայնականներին ազգակից մի խումբ։

### Ընկ. Լենինը յեվ Անդրքեներացիան

Ընկ. Լենինը չբավականացավ միմիայն ցուցմունքներ տալով մեր հանրապետությունների անտեսական միասնականության վերաբերմամբ։ Յսի կասեյի, վոր նրան են պատկանում ծնողական իրավունքները Անդրկովկասյան Ֆեդերացիայի վրա։

Ահա թե ինչ եր գրում Լենինը Ստալինին 1921 թվի դեկտեմբերի 22-ին, Անդրկովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիա կազմելու մասին. «Անդրհանրապետությունների Ֆեդերացիան սկզբունքորեն համարել բացարձակապես ուղիղ և անպայման յենթակա իրազործման, ստկայն անհապաղ գործնական կիրառման իմաստով՝ վաղաժամ, այսինքն, վոր պահանջվում և մի քանի շաբաթ պրոպագանդը իրագործելու և վարից անցկացնելու համար։ Սուջարկել Վրաստանի, Հայաստանի և Աղբերեջանի Կիենտկոմին կյանքում կիրառել այս վորոշումը։»

Այսպիսով, 1921 թ. վերջում, Լենինը կարծում եր, վոր Անդրկովերացիան բացարձակապես անհրաժեշտ է, վոր նա քաղաքականապես ուղիղ և գրված, բայց միայն իրագործելու համար պահանջվում և մի քանի շաբաթ, վորպեսզի հարցը նախապարաստվի, վարից անցկացնելու համար։

Իսկ Լենինին ինչ պատասխանեց ընկ. Ստալինը, վորին այժմ արոցկիստական պայքարի պլատֆորմի հեղինակները ներ-

կայացնում են վորպիս մեր կուտակցության աղքային քաղաքա-կանության և Միության մեջ մտնող աղքերի «չար վոգին»:

(Կարդում ե). (ցիտատ № 3):

«Յես նամակագրություն ունեմ ընկ. Լենինի հետ և առաջարկում եմ շշտապեցել արդ, սպասել տալ վորոշ ժամանակամիջոց տեղական աշխատավորներին ֆեղերացիան կիրառելու համար: Յես նրան գրում եմ. «Ընկ. Լենին, ձեր բանաձեի դեմ յես չեմ առարկում, յեթե համաձայնիք ընդունել հետեւյալ ուղղումը. «մի քանի շաբաթվա քննություն պահանջող» խոսքերի փոխարեն, 1 կետում, ասել «քննության համար վորոշ ժամանակամիջոց պահանջող» և այլն, համաձայն ձեր բանաձեի: Բանն այն է, վոր վրաստանում ֆեղերացիան «կիրառել» «վարից» «խորհուրդների կարգով» մի քանի շաբաթվա մեջ չի կարելի, վորովհետև Վրաստանում Խորհուրդները նոր են սկսել կազմվել: Նրանք դեռ չեն ավարտվել: Մի ամիս առաջ բոլորովին չկային, իսկ այստեղ «մի քանի շաբաթվա» մեջ Խորհուրդների համագումար հրավիրեն ըմբռնելի չե, իսկ ֆեղերացիա՝ առանց Վրաստանի, կլինի թղթի ֆեղերացիա: Կարծում եմ, վոր պետք ե տալ յերկու-յերեք ամիս, վորպիսդի ֆեղերացիայի գաղափարը հաղթանակի Վրաստանի լայն մասսաներում: Ստալին»:

Մի որ անց այս առաջարկությունն ընդունվում է ընկեր Լենինի, Տրոցկու, Կամենեի, Մոլոտովի, Ստալինի ձայներով: Այն ժամանակ Զինովյել չկար Քաղրյուրյում, նրան փոխարինում եր Մոլոտովը: Նշանակում է Քաղրյուրյոն ընկ. Լենինի գլխավորությամբ միաձայն եր Անդրֆեղերացիայի կազմության հարցում: Յեթե կար մեկը, վոր նորից ուղղում մտցրեց ֆեղերացիայի իրագործումը «ժամանակակիրապես արդելելու» իմաստով, ապա գո Ստալինն եր, վորը մեկնակետ ուներ այն, թե մեզ մոտ այն ժամանակ Խորհուրդները ամենուրեք գեռ կազմակերպված չելին, մասնավորապես Վրաստանում: Ստալինն առաջարկեց սպասել, վորպիսդի այդ հարցը անց կացի Խորհուրդների միջոցով, վորոնք արդեն սկսվել ելին կազմակերպվել:

Այսպիսով, կասկած չի կարող լինել այն մտսին, վոր Անդրֆեղերացիան հանդիսանում է մեր Կենտրոնական Կոմիտեյի, նրա գեկափար որգան—Քաղրյուրյոյի, և Քաղրյուրյոյի գեկափար՝ Լենինի քաղաքական դագակը: Յեկ նրանք, վորոնք այժմ փորձում են վարկաբեկել Անդրկովկասյան ֆեղերացիան, համարելով այն մեր աղքային քաղաքականության «այլանդակումը», համարելով այն

«Կովկասի չար վոգիների» - Ստալինի կամ Որջոնիկիձեյի գործը, նրանք ըստ եյության հարձակվում են Լենինի վրա:

Հիմա տեսնենք, թե մենք ինչպես ոգտագործեցինք Անդրկովկասյան ժողովուրդների՝ ուղիղ կառուցված քաղաքական այդ շենքը: Արդյոք լցրինք այն համապատասխան բովանդակությամբ այնպես, վոր ֆեղերացիայի ամբողջ կառուցվածքը հենվեր յերկրի արտագրական ժողովուրդների՝ կուլտուրական ուղիով առավելագույն առաջադիմության, աղքային այն համերաշխության վրա, վորի ամրությունը և խորությունն այժմ վոչ վոք չի ժխտում: Յես կարծում եմ, վոր մեք ֆեղերացիան այս բոլոր գծերով, արևտեսական հեղաշրջման գծով, կուլտուրական հեղաշրջման և սոցիալական հեղաշրջման գծով, այսինքն պրոլետարիատի կոմսոմոլացիան նրա գահնակից չքավոր գյուղացիության հետ—ինքն իրեն արդարացրել և, Յեթե մենք ապացուցենք (իսկ այդ ապացուցել գժվար չե), թե այդ յերեք ուղղությամբ, յերեք հեղափոխությունների—քաղաքական, մտտեսական և կուլտուրական, ֆեղերացիան իր յե ասող կենդանի բովանդակությամբ, վոր նա ոժանդակում և Անդրկովկասի յետամենաց ժողովուրդների կուլտուրական վերածնունդին,— հենց գրանով տրված կլինի այդ ֆեղերացիայի լիակատար հաղթանակի, լիակատար ճանաչման, լիակատար արդարացման ձևակերպումը:

## Ա.Ա.Խ. ինդուստրացման ուղիները

Յես կարծում եմ, վոր իմ գեկուցումը հենց պատասխանելու յե այդ յերեք հարցերին, ինչ և Անդրկովկասյան ֆեղերացիան, ինչ ենք արել մենք՝ այդ ֆեղերացիայի գարբինները և մշակներն Անդրկովկասում, այս խայտարգետ անկյունում, վոր ունի սոցիալական և աղքային բարդ կազմ: Մենք այստեղ պատմական ամենակարծ ժամանակամիջոցում առաջ ենք տարել թե անտեսական և թե կուլտուրական հեղափոխության գործը:

Թվերով չեմ հանի ձեզ համբերությունից: Թվեր բավական կան, մի 5—6 ժամ կը աշխեն. նրանց հետ մենք ծանոթացանք հանրապետական համագումարներում: բացի այդ, գուք վորպես շինարարության անմիջական մասնակցողները ինքներդ ուսումնակիրել եք և ծանոթացել նրանց զանազան աղբյուրներից: Յես կուզենայի միայն կարճառոտ կերպով վերլուծել այն, ինչ հա-

կացվում ե փորպես տնտեսական հեղափոխություն, ինդուստրիալիզացիայի կռնկրետ պլանն ու ծրագիրը Անդրկովկասում:

Նախապես յերկու խոսք ինդուստրիալիզացիայի բազայի, եներգիայի, մեր տնտեսության այդ յուրատեսակ նյարդային սիստեմի մասին: Ի՞նչ ենք արել մենք, ի՞նչ աջողություններ ունենք Անդրկանրապետությունների ելեկտրիֆիկացիայի բնագավառում: Ասել, թե ունենք հսկայական աշողություն — այդ բավական չե: Պետք է մատնանշել, թե ինչպես ե փոխէլ տնտեսության ստրուկտորան, տնտեսական զարգացման ինչ նոր հեռանկար կա մեր առջև, նկատի ունենալով այդ տնտեսության փոփոխվող եներգիայի բաղան: Այստեղ բավական ե բերել մի քանի թվեր: Յեթե 1913 թ. Անդրկովկասում ունենք եներգիայի գործածության՝ կիրարատ-ժամով արտահայտված՝ մեկ շնչին 3.5, ապա այս տարի մենք ունենք 7, այսինքն 200 տոկոս ավելի: Իսկ հսկայա պլանի իրագործման հետևանքով՝ կունենանք 35 կիրարատ ժամ, այսինքն մինչ-պատերազմյան համեմատությամբ 10 անգամ, 1000 տոկոսով ավելի:

Այսպիսով, արդյունագործության եներգիայի բազա ստեղծելու բնագավառում մենք քայլում ենք կարելի յե ասել յոթմունանոց քայլերով: Հասկանալի յե, վոր մեր հանրապետությունների ունեցած ջրային եներգիայի ամբողջ պահեստների հետ համեմատած այս շարժումը դեռ աննշան ե: Բայց նկատի ունենալով վաղվա հեռանկարները, պետք ե ասել, վոր ելեկտրիֆիկացիայի տեմպը բացարձակապես բավական ե նրա համար, վոր կասկած չունենանք կառուցվող արդյունագործության համար եներգիայի բազա ապահովելու հնարավորության և պատճենության մասին: Հիմա ավարտված ե մի շարք կայանների կառուցումը, մի շարք կայաններ գործի յեն դրվելու մռատիկ ապագայում, մի շարք կայաններ կառուցվելու մեջ են, և այս բոլորը, կրկնում եմ, ծռատյելու յե վորպես եներգիայի բավականաչափ նոր աղբյուր զարգացող արդյունագործության համար:

Ընկերներ, տեսնելով այս վիճակը, տեսնելով, թի ինչպես յետամասաց յերկրներ՝ Վրաստանը, Հայաստանը, պյուղական Աղբյուրնեջան այժմ կամ ծածկվում են, կամ հեռանկար ունեն վաղը ծածկվելու հիդրո-ելեկտրական հողոր աղբյուրի վեղին ե հիշել բանաստեղծի խոսքերը. «այժմամասների, այլ պատկերների սկիզբն ենք դնում»: Վորոն ե այդ պատկերը. — մեր յերկրի կերպարանափոխությունը՝ խորապես

գյուղատնտեսական յերկրից՝ հզորապես ինդուստրացված յերկրի և հզոր գյուղատնտեսության և արդյունագործական հզոր ինդուստրիայի:

Անդրկովկասում մենք հաճախ, անթույլատրելի կերպով հակադրում ենք գործնական զարգացման, բայի նեղ իմաստով ինդուստրիայի, շահերը՝ գյուղական տնտեսության զարգացման: Մեզ մոտ ինդուստրացման շահերը չեն հակասում գյուղատնտեսության շահերին, ընդհակառակ ինդուստրիալիզացիայի ծրագիրն անպայմանորեն ընդգրկում ե գյուղական տնտեսությունը: Գուցե շատերին հայտնի չե, վոր, յեթե վերցնենք ամրող Անդրկովկասը՝ նրա նավթարգունաբերությամբ և մարգանեցով, ապա մեր փոքրիկ անկյունը հանդիսանում ե Միության ամենաինդուստրիալ անկյունը: Վոչ էնինքը ուայնը, վոչ Ուրալը, վոչ Դոնինը, վոչ Կենտրոնական արդյունագործական շրջանը չեն կարող համեմատվել մեր Անդրկովկասի հետ, վորը մենք սովորաբար համարում ենք ամբողջապես գյուղատնտեսական յերկրի: Այստեղ ազգային հասույթի ընդհանուր դումարի մեջ 63 տոկոսն ընկնում ե արդյունագործության արտադրության վրա, իսկ մնացյալը՝ գյուղատնտեսության: Այս տօկոսը Միության համար հանդիսանում ե առավելագույնը:

Առանց նավթի և մարգանեցի արդյունաբերության այլ պատկեր կատացվի, այսինքն, ընդհանուր ազգային յեկամտի մեջ արդյունաբերական արտադրությունից ստացած գումարը կկազմի ընդամենը 37<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ մնացած բոլորը գյուղատնտեսական արտադրության վրա կընկնի: Այսպես ուրեմն, յեթե նկատի առնենք մեր գյուղական տնտեսության ռեսուրսները, վորը ըստ եյության հում նյութերի հսկայական շուկա յե ներկայացնում մեր Միութենական արդյունաբերության և արտահանության համար, ապա, կրկնում եմ, արդյունաբերության շահերը, վորպես այդպիսին, մենք չպետք ե հսկայական գյուղական տնտեսության զարգացմանը: Ինդուստրիան այստեղ հանդիսանում ե վորպես յերկու կողմանի մի պրոցես, մի կողմից նա վերաբերում ե քաղաքային արդյունաբերությանը, և մյուս կողմից զարդ ե տալիս գյուղական տնտեսության՝ վորպես արդյունաբերական հում նյութերի աղբյուրի զարգացմանը:

Ի հարկ ե արդյունաբերությունը մեղ մոտ պիտի լինի վորպես սկիզբ շատ բաների. սակայն ինդուստրիալիզացիան մեզ համար միմիայն քաղաքային արդյունաբերության շրջանակների մեջ

փակված մի պրոցես չե: Արդյունուրերական զարգացումը մեզ մոտ, վորպես ընդհանրապես հում նյութերի մի յերկրում, անկառակած յենթադրում և համապատասխան զարգացում, համապատասխան ընդգրկում ամբողջ գյուղական տնտեսության:

Յենելով այս բանից, մի շարք տարիների ընթացքում այն տեսակետն ենք պաշտպանել, վոր մենք մի կողմից ընդունում ենք Սնդրկովկասի, վորպես լեռնա-քիմիական մի ուայնի արդյունաբերական զարգացումը, սակայն, նկատի առնելով, վոր այդ զարգացումն ահազին ծախսեր և պահանջում, ընդունում եյինք, վոր սա ապագայի հարց ե, սա ապագայի, թեպետև մոտիկ ապագայի յերաժշտություն եւ Բայց մյուս կողմից, արդյունաբերական զարգացումը ներկա որերի համար մենք յենթադրում եյինք վորպես արդյունաբերական մի զարգացում, վորն ուղղված է դեպի մեզ մոտ յեղած հում նյութերի մշակումը, վորպես արտադրության մոմենտների մոտեցում հում նյութերի հայթաթման տերրիտորիային:

Յեկ ահա, յերբ մենք այժմ հերոսարատյան պլատֆորմայում կարգում ենք այնպիսի հայտարարություններ, իրը թե մեզ մոտ ստվերի մեջ են մնում իսկական կենսական խնդիրները — արդյունաբերական շինարարության պլանի անցկացնելը ազգային ըլլաջաններում և մանավանդ գյուղատնտեսական հում նյութերի վերամշակումը, — մենք պետք ե բարացի կերպով՝ տարածենք մեր ձեռները ոպոզիցիայի համբակության և կամ առանձին տեսակի ստորության առաջ, վորն այս բողեյիս իր արողկիստական կուռակցության ծրագրի կետերից մեկն ել դնում ե այն, ինչ վոր մեզ մոտ վաղուց ի վեր արվում ե:

Ի՞նչն և հանդիսանում յերկրի արտադրական ույժերի աճման հիմնական նշանը: Մենք դիտինք Մարքսից (նրա «Կապիտալ» 2-րդ հատորը) և լենինից («Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում»), վոր յերկրի արտադրական ույժերի զարգացման հիմնական և ամենաճշգրիտ ցուցիչը հանդիսանում է հիմնական ու մշտական կապիտալի կազմումը: Այս բողեյիս մեզ մոտ Սնդրկովկասում ընթացող պրոցեսը կայանում է նրանում, վոր մենք, Միութենական արդյունաբերական ույյուններից բոլորովին տարեր, — վորտեղ ինդուստրիալիզացիան սկսվում է գոյություն ունեցող ֆարբիկաների ու գործարանների վերականգնմամբ մինչև նախապատերազմյան մակարդակը և վերասարգվում ու վերակառուցվում ե արդեն նոր տեխնիկական բաղայի հիման վրա, — և մա-

սամբ ստեղծում ենք նոր արտադրական ոջախննը, արդյունաբերության նորանոր ճյուղեր, «նորակառուցումներ» ենք անում:

Այսուեղ կա վերականգնում ու վերակառուցում և մասամբ ել նորակառուցրում: Իսկ մեզ մոտ կապիտալ միջոցները գլխավորապես գնում են նորակառուցումների համար. այսինքն հիմնական համակառակալ և կառուցվում: Համաձայն արդյունաբերական զարգացման բոլոր ցուցիչների, մենք վերջին ժամանակներում մեծ թոփչք ենք արել գեպի վեր: Անցած այս 1926 — 27 թվերին մեր հիմնական կապիտալը աճեց 41%՝ Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. մեր ամբողջ ցենզային արդյունաբերությունը, վորը յենթարկվում է հանրապետությունների ԺՏԽ-ին, 35 միլ. հիմնական կապիտալ և ունեցել: Ընթացիկ տարվա մեջ նորից 14 միլիոնից ավելի մի դրամար մտավ արդյունաբերության մեջ, այնպես վոր զարգացման տեմպը մեզ մոտ հավասար է 41%-ի: Իսկ Միութենական արդյունաբերությունը 1925—26 թ. ունեցել է զարգացման տեմպ 10%, 1926 — 27 թ. 11%: Սրա մեջն է տարրերությունը ինդուստրիալիզացիայի մեր և Միութենական ուղիների միջև: Այսուղ վերածնունդ, վերակառուցում ե, և մեզ մոտ գլխավորապես նոր կառուցումներ, 41% և 11%:

### Նորակառուցումների խիստ պլանավորումը

Վերն է այս նոր կառուցումների տեսակարար կշիռն ընդհանուր կապիտալ մուծումների մեջ: Ամբողջ ԽՍՀ Միության արդյունաբերության մեջ դրված կապիտալ դրամների ընդհանուր գումարից 1925—26 թ. կառուցումների վրա ընկնում եր 14%, իսկ այս անցած տնտեսական թվականին՝ 20%, Մեզ մոտ, ԱՍՖԽ-ի մեջ, համապատասխանաբար 67% և 79%: Ուր, վոր ճյուղերի մեջ ենք դնում մեր կապիտալները: Այս հարցը պարզելու համար պետք է վերցնել մեր հանրապետությունների արդյունաբերական պատկերը ինդուստրիալիզացիայի այն ուժեղ պլոցեսի նախորեյին, ինչ վոր այժմ է ծավալվում: ԺՏԽ-ին յենթարկված ցենզային արդյունաբերության հիմնական կապիտալը գեռ վերջերս գնահատվում էր 22 միլիոն ռուբլի: Ինչպես բաշխվեցին այս 22 միլիոն ռուբլիները: Այս գումարի մեծ մասը, 37%, արդյունաբերության ճյուղերին եր ընկնում, վորոնք զբաղված են սննդապահմի, գյուղական անտեսության արտադրության վերամշակությամբ, որինակ ծխախոտ, գինի և այլն: 20% ընկնում եր

տեքստիլ արդյունաբերությանը, 12-ը՝ մետաղի, 7-ը՝ կայծաքարատի, (ցեմենտի գործարանների և այլ) և միայն 5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը անտառային արդյունաբերությանը, այսինքն այն արդյունաբերությանը, վորով մենք ավելի հարուստ պիտի լինելինք, քան ՍԻՀՄ բազմաթիվ այլ ռայոնները։ Այսպես եր առաջ։ Այն բանից հետո, յերբ մենք արտադրությունը մեզ մոտ յեղած հում նյութերի վերամշակմանը մոտեցնելու գիծն ընդունեցինք, տեղի ունեցավ մեր արդյունաբերության հիմնական կապիտալի հետայալ տեղափոխությունը։ Տեքստիլ արդյունաբերության համար (բամբակագոտիչ գործարաններ, ձիթհան գործարաններ, տեքստիլ ֆաբրիկաներ) մենք ունենք հիմնական կապիտալ 43<sup>0</sup>/<sub>0</sub>, անտառայինի համար՝ 18<sup>0</sup>/<sub>0</sub>, լեռնային ու կայծաքարատի ճյուղերի համար՝ 19<sup>0</sup>/<sub>0</sub>։ Այսպիսով, արդեն սկսվել է նաև մեր արտադրության մոտեցման պրոցեսը մեր հում նյութերին, և մեր արդյունաբերության հիմնական կապիտալի կազմությունն արտացոլում եւ այս տեղափոխությունը։

Բամբակի յերկրում սարք ու կարգի յեն ընկնում բամբակագոտիչ, ձիթհան և տեքստիլ համապատասխան գործարաններն ու ֆաբրիկաները։

Անտառուտ յերկրում, վորտեղ տակավին վերջերս անտառային արդյունաբերությանն ընդամենն ընկնում եր հիմնական կապիտալի 5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, անտառային արդյունաբերությունն այժմ յերկրորդ տեղն ե բռնում (սոլոցագործարանները, բամբակեղենի ֆաբրիկան)։ Տերբիտորիալ տեսակետից ավելի կամ պակաս ճիշտ, ավելի կամ պակաս համապատասխան այն հում նյութին, ինչ տալիս ե տվյալ ռայոնը, տեղավորված են նաև մնացած բոլոր նոր գործարաններն ու ֆաբրիկաները։ Յես կարծում եմ, հենց այս ել հանդիսանում ե մեր կապիտալ մուծումների ամենասպատակահարմար ոգտագործումը։

Այստեղ պետք ե զգույշ լինել մի սխալից։ Մենք չենք կարող հսկու ձեռնարկների շինարարության գեմ լինել։ Զե վոր միշաել պարտագիր չե, վոր արտադրությունը հենց հում նյութերի հարևանության մեջ լինի։ Յեվ վոչ մի հսկա գործարան չի կարող գոյություն ունենալ, յեթե մենք այս սկզբունքն անցկացնենք մինչեւ վերջ, առանց ուղղումների, ուղղագիծ կերպով։ Միութենական արդյունաբերությունը հսկայական արդյունաբերություն և նա այժմ ունի և մոտիկ առաջարկությունը պետք ե ունենա ել ավելի մեծ թեքում գեպի հսկա ձեռնարկությունների շինարարությունը։

Ինարկե, Միութենական արդյունաբերությունը պետք ե հաշվի առնի այն հում նյութերը, վորոնք գտնվում են Միության զանազան ռայոններում։ Այդ պատճառով մենք չենք և չպետք ե լինենք սեպարատիստներ, այլ պետք ե յենենք ընդհանուր պահանջներից, ամրող Միութենական արդյունաբերության ընդհանուր շահերից, վորովհետև միմիայն այս բազայի վրա հսարավոր ե ամբացնել սոցիալիստական շինարարությունը։ Այդ պատճառով մեր պլանի մեջ մենք պետք ե հաշվի առնենք յերկու մոմենտ։ ինչպես հում նյութերի վերամշակումը նրանց արտադրության վայրերի մոտերքը, այնպիս և որինական ձգտումը դեպի հում նյութերի կենտրոնացումը, վորն անհրաժեշտ ե Միութենական նշանակություն ունեցող խոշորագույն գործարանների ու ֆաբրիկաների համար։

Յեթե քննենք այն դրությունը, ինչ կա մեզ մոտ, ապա կարելի յե շեշտել, վոր այդպիսի հաշվառք մեզ մոտ գոյություն ունի, չնայելով հնաց այստեղ իսկ պետք ե խոստովանել, վոր մենք տակավին տառապում ենք անպլանությունից։ Ի հարկե, համեմատել այս տարին անցյալի հետ կարիք չկա։

Այս բոպեյին պլանային տեսակետից մենք բավական ամուս ենք զգում մեզ։ Այժմ արդեն մենք չունենք այն պարտիզանականությունը, այն ցատկումները, վորոնք բնութագրում եյին շինարարությունը խորհրդացին իշխանության առաջին տարիներին, և նույն իսկ 1923—24, 1925—26 թ.թ.։ Չոր պլանն աստիճանաբար սիստեմի մեջ ե մտնում, անհրաժեշտ պայման և զառնում, վորպիսզի այս կամ այն շինարարությունը հնարավոր լինի կատարել։ Բայց այնուամենայնիվ ճակատում ճեղքեր լինում են։

Յես արգեն ասացի, վոր մեր շինարարությունն առաջ ե շարժվել աջող տեմպով։ Սակայն այդ շինարարությունն եժան և ե յեղել։ Դիբախտարար այս բանով մենք պարծենալ չենք կարու։ Այս պակասավոր կողմերը, վորոնք մեզ ուղեկցում եյին այս գործում, միմիայն «յերիտասարդության մեղքերը» չեյին։ Ամեն մի հանրապետություն ուղղում եր ունենալ ամեն ինչ, և հաճախ դեպքեր են յեղել, յեր հաշվի չեն առել վոչ շինարարության նպատակահարմարությունը և վոչ ել նոր արտադրողական միավորների շահավետությունը։

Անշուշտ, այս հանդամանքը խուճապի առիթ չի առաջ։ Մենք, հասկանալի յե, կվերացնենք այն, սակայն կվերացնենք այն գեպում միայն, յեթե կուսակցության հասարակական կարծիքը ծառս



կինի բառիս բուն ՚իմաստով այն պարտիզանականության գեմ, վորը դեռևս վորոշ տեղերում նկատելի յեւ և վորոշ մարդկանց գեռ աջողվում եւ:

### Գյուղական տնտեսության զարգացման տեմպը

Մոտենալով գյուղական տնտեսությանը, մենք պետք եւ արձանագրենք, վոր թեև մեր գյուղատնտեսությունն աճում եւ, թեև համում է մինչպատերազմյան մակարդակին, այսուամենայնիվ նրա զարգացումը բնորոշվում է վորպիս թույլ զարգացում: Գոյություն ունի ինչ վոր պատմական արտա, վորը դեռևս հնարավորություն չի տալիս այդ տնտեսությանը ծաղկելու այն փոթորկությունը, վորը բնորոշում է արդյունաբերական շինարարությունը: Զնայած այն բանին, վոր մեր իշխանությունը, տեղական որգանները և ինքը գյուղացիությունը խիում են միենույն կետին գյուղատնտեսությունը բարձրացնելու համար, այսուամենայնիվ նրա զարգացումը դեռևս թույլ եւ:

Վերցնենք որինակ այնպիսի լուրջ կուլտուրաները, ինչպիսիք են ծխախոտը, բամբակը և այլն: Այս բնագավաններում անպայման նկատելի յեւ առաջ շարժումը, անպայման մերձեցում մինչպատերազմյան մակարդակին, տեղ-տեղ մինչև անգամ այդ մակարդակից անցել են: Սակայն ինքնին այդ տեմպը բնորոշ չի ուժեղ աճման:

Այստեղ մենք մի կողմից հաճողիպում ենք մեր կուլտուրաների քիչ բերք տալուն, մյուս կողմից բավականաչափ հող չցանելու հարցին, չնորհիվ մեր ջրաշինարարության վոչ բավականաշափ ույժի: Այս որյեկտիվ բնույթ կրող պակասությունները կարենի յեւ վերացնել, յեթե մենք ուժեղ կերպով պնդենք մեր դաշտերի բերբությունն ավելացնելու անհրաժեշտության և վորոգման ջրանցքներն ավելացնելու վրա, համաձայն այն ծագող պահանջների, համաձայն այն անհրաժեշտության, վոր ավելի ծագւենք բամբակի կուլտուրան, ավելի զարգացնենք այն շրջանները, ուր մենք արտադրում ենք հումք մեր արդյունաբերության կամ արտահանության համար:

Մեր այս տեսակետը հաճախ չի պահպում. հաճախ մենք վորոգման և ցանքսի աշխատանքներ չենք տանում այնտեղ, ուր կտրող ենք նոր, արժեքավոր կուլտուրա տնկել, կամ ավելացնել ու ծավալել այն կուլտուրան, վոր արդեն կա մեզ մոտ: Ուստի այս

տեսակետից մեր խնդիրն եւ սահմանափակել մեր տեմպն ու ախորժակը մի տեղում և ուղղել այն դեպի մի այլ կողմ: Այլապես մենք ամուր բազա չենք կարող ունենալ ինդուստրիայի համար, մենք մեր ձեռքին չենք ունենա այն դեկը, վորով կարողանաք շրջել և զինագործել խորհրդային գյուղատնտեսությունը:

Մտածում ենք գյուղացիությունն առաջ շարժել անհատական տնտեսությունից դեպի սոցիալիստական զարգացման մեծ ձանապարհը -- պրոլետարիատի զեկավարությամբ:

Յեթե այս տեսակետից դիտենք գյուղատնտեսությունը և գնահատենք այն տարիների հետևանքները, վորոնք անցել են խորհրդայնացումից հետո, ապա պետք եւ մատնանշենք վոչ թե այն փաստերը, վորոնց վրա մեր աշքերը հանգստանում են, այլ այն փաստերը, վորոնք չեն բավարարում մեզ առաջիկա տարիների հեռանկարների տեսակետից:

Ի՞նչ եւ մեր նպատակը գյուղում: Ի՞նչ խնդիր ենք գնում մենք մեզ ներկա գյուղի նկատմամբ: Մենք կամենում ենք նրան վերապինել տեխնիկապես, և ապա վերազինել հոգեպես: Սա նույնպես անհրաժեշտ է սոցիալիզմի շինարարության համար, ինչպես և նյութապես վերազինումը: Անցյալ համագումարում յիս ասացի մեր իզգի մասին, վոր «արոր ունեցող գյուղացուն» դարձնենք «գութան ունեցող գյուղացի»: Մենք դեռ ևս փաստեր չունենք, վորոնք ապացուցեն, վոր «արոր ունեցող գյուղացին» արդեն անցած ետապին և պատկանում, վորի տիպը հաղիվ և պատահում մեր այս կամ այն յետամնաց գյուղում: Մինչև այժմ ել մեր գյուղում «արորով գյուղացին» մնում ե վորպես կենտրոնական դեմք: Մենք չկարողացնք մեր գյուղը լիացնել այնչափ տեխնիկայով, գյուղատնտեսական մեքենաներով, վոր կարելի լիներ խոսել տեխնիկական վերազինման մասին, վորպիս կատարված փաստի—մեր գյուղում: Բայց այն փաստը, վոր մենք գյուղում ունենք 1000 տրակտոր, 85.000 նոր տիպի գութան, 420 բարդ հնձող մեքենա և 152 կալող մեքենա, այսուամենայնիվ շոշափելի յեւ:

Պատկերը միմիթարական ե հենց նրանով, վոր մեզ մոտ մուտք և գործում և ամրանում տրակտորը: Դեռ յերեկիվա, մեր նախկին հերթային, անիրագործելի իզգը, վոր արորի կողքին հողը հերկի նոր սիստեմի գութանը, այժմ աշխատում են հնձող մեքենաները գյուղացիության առաջ բանալով հողը մշակելու ավելի ուսցինաւ ձեւը: Այսպիսով մենք արդեն մտել ենք գյուղատնտեսության մեքենացման համապարհը: Բայց այս ուղղությամբ մենք դեռ շատ

մեծ աշխատանք ունենք անելու և կազմակերպչական, և յեթե կուզեք՝ քաղաքական, վորոնք ամրացած կլինեն համապատասխան ռեսուրսներով։ Մենք գյուղական անտեսությունների այնպիսի հսկայական մի ծով ունենք, ուր գեռ ևս ուժեղ և մասնավոր սեփականության ֆանատիզմը։ Մենք գյուղական անտեսությունների այնպիսի հսկայական մի ծով ունենք, վորը շրջապատում է արդյունաբերական պրոլետարիատի արդյունաբերական փոքրիկ կղզիները, արդյունաբերական փոքրիկ ողախները։ Մենք պետք ենակապեցնենք մեր աշխատանքի տեմպն այդ կետում, քանի վոր առանց այդ բանի խոսք անդամ լինել չի կարող կարճ ժամանակամիջոցում սոցիալիզմի կառուցման մասին։ Քաղաքի ինդուստրիալիզացիան բուքսիրի վրա պետք են առնի գյուղացիական տընտեսությունը և նրա հետ միասին շարժվի դեպի սոցիալիզմ։

Ես արդեն ասացի, թե այնուամենայնիվ մենք մի քանի միսիթարական ապացույցներ ունենք. որինակ թեյագործության գործը։ Այս բնագավառում մենք ռեալ հեռանկարներ ունենք, վորոնք զգալի չափով լուծում են սակավահողության ու հողային տեղափոխության հարցը և այստեղից ել գործազրկության ոյն հարցը, վորը բնորոշ է Արեմտյան Վրաստանի մի քանի շրջաններին։ Թեյի գործը Վրաստանում ի վառք ու պատիվ մեր ընկեր Խորհրդային Ռուսաստանի հողժողկոմ Սմիրնովի (պետք են ասել, վոչ իբր վիրավորանք մեր տեղական աշխատավորների, վոր թեյաբուծության զարգացման հսկամյա ծրագիրն առաջ են քաշել ընկեր Սմիրնովը), իսսատանում են մոտ ապագայում տալ վայլուն հետևանքներ, վորոնք միանգամայն կվերածնեն Վրաստանի այն անկյունները, ուր այդ կուլտուրան պատվաստվում են։ Հստ հնգամյա ծրագրի, 20.000 հեկտար հող պետք են հատկացվի թեյի կուտարային։ Հինգ տարվա ընթացքում մենք պետք են թեյաբուծական գործի մեջ դնենք 5 միլիոն սուրբի, ի հաշիվ բյուջետային և վարկային հատկացումների մի կողմից, և գյուղացիական աշխատանքի—մյուս կողմից։ Հնգամյակի վերջում մենք պետք են ունենանք 24 թեյի ֆարբիկա, վորոնք մշակելու յեն 54 միլիոն ֆունտ կանաչ տերեկ, վորը կտա 12.700 ֆունտ պատրաստի թեյ և կիսնայի մեր Միության համար մոտավորապես 10 միլիոն սուրբի վայրուտա, վորն այժմ ծախսվում է ներմուծվող թեյի վրա։

## Հողաշինարարության նեռանկարները

Յես պետք են մի քանի խոսք ասեմ հողաշինարարության դանդաղեցման մասին։ Մեր յերկրում առանց հողաշինարարության, ուր զարգացած է գյուղացիական գաճաճ տնտեսությունը, անկարելի յե այդ տնտեսության ազատ զարգացումը։ Հողաշինարարությունը մեզ անհրաժեշտ եւ։ Սակայն նա գանդաղ տեմպով է ընթանում։ Դրա պատճառները մենք գիտենք։ Այդ հարցը մի շարք խորհրդային և կուսակցության համագումարներում քննել ենք։ Սակայն այժմ, այդ կետում մեր առաջ բացվել են վորոշ հեռակարներ, շորջինիվ կենացործկոմի հորելյանական սեսիայի վորոշման, վորով չքավոր և միջակ, բայց թույլ անտեսությունների հողաշինարարության ծախսը կատարվելու յե պետության հաշվով։ Յես կարծում եմ, վոր այդ վորոշումը բավական ուսալ հիմք է տալիս մեր Անդրկովկասյան կազմակերպությունների նախօրդ համապումարի այն վորոշմանը, վոր հողաշինարարական աշխատանքները վերջացնենք 1930 թվին։ Ինարկե, միանգամայն համոզված մինել, թե մենք այդ աշխատանքը կիրականացնենք 1930 թվին, չի կարելի. չեն բավականանա վոչ միջոցներ, վոչ մարդկային ույժ, սակայն պետք են հաշվել, վոր մոտակա տարիներում մենք հողաշինարարությունը կիրաջացնենք։

Այսպիսով, մեր հանրապետությունների ազրարային զարգացման տեսակետից, մենք վորոշ քայլ ենք արել գեալի առաջ, մի քայլ վորը մեզ լրացուցիչ ույժ կտա, վոր մեր ընդհանուր եկոնոմիկայի շարժումը դնենք ինդուստրիալիզացիայի ուլտիմիտ վրա դեպի սոցիալիզմ։

## Յերկարութիները մեր ուշադրության կենտրոնն են լինելու

Այսուհետեւ, չի կարելի յերկաթուղիների դրության մոտից անցնել։ Յեթե ելեկտրական հներգիան մեր արդյունաբերության հյարդային սիստեմն եւ, ապա յերկաթուղիները արենատար անոթներն են, մեր տնտեսության ապրանքների շրջանառություն որդանը։ Այս կետում մենք չենք կարող թույլ լինել, քանի վոր այդ թուլությունն, ի հարկե, կանդրագանա վոչ միայն մեր տնտեսության, այլև մեր քաղաքական շահերի վրա։

Վերջին տարիներս, ինչպես ձեզ հայտնի յեւ, յերկաթուղիները յեղել են ուշադրության կենտրոնում, յերբեմն յուրատեսակ ուշադրության: Մենք հայհոյում եյինք այն աշխատավորներին, վորոնց ձեռքն եյինք հանձնել մեր յերկաթուղիների բախտը: Հայրոյում եյինք տեղին, բայց հաճախ չէինք մեղմացուցիչ հանգամանքներ, վորոնք, իհարկե, գոյություն ունեյին: Այս բանում մեծ հանցանք չկա, քանի վոր մենք հայրոյում եյինք մերանց, ուստի և քաշվելու բան չկար, սակայն այժմ մենք պետք ե (և կարող ենք) ավելի հանգիստ զննել դրությունը: Այժմ, խղճով ասած, պետք ե արձանագրենք, վոր կան առողջացման անկանակած տարրեր:

Առաջիւ պես ցավը նրանումն ե, վոր տրանսպորտի հիմնական դրամավորման տեմպը մնում է գարձյալ չափազանց աննշան, համեմատած ինդուստրիայի դրամավորման չափի հետ: յերեք տարվա ընթացքում արդյունաբերությանը հատկացված է Միության հիմնական կապիտալի արժեքի  $35^0/_{\circ}$ -ը, իսկ տրանսպորտի համար սկսում է նոր եղորսա: Որո՞ք ավելի հշիսանությունը և կուսակցական կազմակերպություններն արդեն անհրաժեշտ քանակությամբ նոր սրակումներ են անում յերկաթուղիների կապիտալի մեջ:

Ճամբորդների տեղափոխությունը մինչպատերազմյան մակարդակի համեմատությամբ կազմում է  $119^0/_{\circ}$ : Բեռների տեղափոխությունը՝  $31^0/_{\circ}$ -ով ավելի: Շնորհմեքենաների վերանորոգման վործն Անդրկովկասում միջին թվով հասնում է  $313^0/_{\circ}$ -ի՝ մինչպատերազմյան մակարդակի դիմաց: Փոխադրությունների աճումն ընթացիկ տեղափոխությունների հարցն այնպիսին է յեղել, վոր թե կենտրոնում և թե այսուղ, ընակցինարարությանը քիչ միջոցներ և հատկացվել ավելի սուր կարիքներ ունենալու պատճառով: Կարծում եմ, վոր այս տարվանից գործը համեմատաբար ավելի լավ է գնա:

Ահարաժեշտ և մատնանշել, վոր մեր տրանսպորտի վաղուցվաեզարդ կատարված և արդեն, այն ե՛ Սուրբամի լեռնանցքը հեթարիֆիկացիայի յեւ յենթարկված: Այս աշխատանքը հետագայում կոյուրացնի նավթային բեռների փոխադրման գործը և կվերացնի մի շարք գժվարություններ: Նախագծվում է արևելյան մասերում յերկրորդ գիծն անց կացնելու գործը, ուր նրանք միանգամայն անհրաժեշտ են: Ինչպիսի դրության մեջ և գանգում աշխատանքային գիսցիպինան և ինչ հարաբերության մեջ և այդ գիսցիպինայի անկման հետ—բյուրոկրատիզմը՝ մեր յերկաթուղային կենտրոնական գարչական մարմիններում, առ այժմ ճշգրիտ կերպով հնարավոր չեւ վորոշել: Կար մոմենտ, վոր մեր գարչական ապարատի բյուրոկրատիզմի հիմնական մեղքը բարդանում եր հենց աշխատանքային գիսցիպինայի անկումով:

Գործունեյության ծավալման հետ միասին, աճեց նաև միքանի տասնյակ կամուրջներ կառուցելու կարիքը, քանի վոր գոյություն ունեցող կամուրջները հարմարեցված չեյին նոր յերթեկության համար, ծանր փախադրությունների և գնացքների ծանր կազմի համար և այլն: Այնուամենայնիվ, այս տարի մենք ծանր

միանգամայն վերաշինեցինք Փոյլուի կամուրջը, Քսանկայի, Զիրուկի, Շորապանի կամուրջները: Ներկայում շինվում ե Յեղիսի կամուրջը:

Ի՞նչ բանով են յետ մնում յերկաթուղիները... բնակարանացին շինարարությամբ: Բնակչինարարությունն ընդհանրապես, համեմատական չափով արագ կերպով և առաջ ընթանում: Ասում եմ համեմատաբար, գորովհետեւ յերկաթուղային ընակշինարարությունն այս բնագավառում յետ և մնում մյուս շինարարություններից, ել չենք խոսում արդեն Ազնավորի և ուրիշ կազմակերպությունների մասին: Յերկաթուղին ամենից վերջին տեղին ե բռնում: 1925 թվին ընակշինարարության համար նա հատկացրել է 294.000 ռուբ., 1926 թ. 1.048.000 ռուբ., 1927 թ. 1.535.000 ռուբի: Մինչև այժմ ել մենք դեռ ունենք վագոններ, վորոնք վերածված են բնակարանների. սա խայտառակություն է: Հասկանալի յեւ, վոր մեր վարչությանն այս տեսակետից չի կարելի հարվածել: Տրանսպորտի գժվարությունների հարցն այնպիսին է յեղել, վոր թե կենտրոնում և թե այսուղ, ընակցինարարությանը քիչ միջոցներ և հատկացվել ավելի սուր կարիքներ ունենալու պատճառով: Կարծում եմ, վոր այս տարվանից գործը համեմատաբար ավելի լավ է գնա:

Ահարաժեշտ և մատնանշել, վոր մեր տրանսպորտի վաղուցվաեզարդ կատարված և արդեն, այն ե՛ Սուրբամի լեռնանցքը հեթարիֆիկացիայի յեւ յենթարկված: Այս աշխատանքը հետագայում կոյուրացնի նավթային բեռների փոխադրման գործը և կվերացնի մի շարք գժվարություններ: Նախագծվում է արևելյան մասերում յերկրորդ գիծն անց կացնելու գործը, ուր նրանք միանգամայն անհրաժեշտ են: Ինչպիսի դրության մեջ և գանգում աշխատանքային գիսցիպինան և ինչ հարաբերության մեջ և այդ գիսցիպինայի անկման հետ—բյուրոկրատիզմը՝ մեր յերկաթուղային կենտրոնական գարչական մարմիններում, առ այժմ ճշգրիտ կերպով հնարավոր չեւ վորոշել: Կար մոմենտ, վոր մեր գարչական ապարատի բյուրոկրատիզմի հիմնական մեղքը բարդանում եր հենց աշխատանքային գիսցիպինայի անկումով:

Սակայն պետք ե ասել, վոր պրոֆկազմակերպությունների և կառավարության ճնշմամբ, մեր գարչականների բարի կամքով՝ այդ տեսակետից աջողվեց մի քանի բան շտկել: Անշուշտ, ասել թե մեզ մոտ արդեն բյուրոկրատիզմը գոյություն չունի, գա անեկ-

գոտային ե. ասել, թե աշխատանքային դիտցիպլինան բարձրացել է ամենավերին աստիճանին, դարձյալ չի կարելի, բայց համենայն գեպս, այս ճյուղում ել մենք վորոշ առողջացում ունենք:

## Աշխատավարձ

Այժմ յես ձեր ուշագրությունը կհրավիրեմ աշխատավարձի վրա։ Ուղղված մի հեքյաթ և տարածել այն մասին, թե մեզ մոտ 1925 թվից սկսած աշխատավարձը չի բարձրանում և աճման տեսնենոց չունի։ Այս հեքյաթը պատմված է և Անդրկովկասի համար։

1926 — 27 թվին աշխատավարձը ցենզույին արդյունաբերության մեջ կազմել ե միջին թվով 69 ռ. 32 կոպ.: 1927 — 28 թվի համար մենք նախագծում ենք 74 ռ. 41 կոպ., բարձրացում՝ 7,3% -ով: Այս բանն արվում է նաև արանսպորտում, ուր մանրակրկիտ քննության, հետազոտության և դիսկուսիաների առարկայի յեղակա:

Մեր ամբողջ եկանոնիկան այնպիսի ձևով ե դասավորվում, վոր գործազրկությունը մոտակա տարիներում վերացնել չենք կարող: Մասնավորապես Անդրկովկասում, վերջին տարիներս մենք նկատում ենք, վոր գործազրկությունն աճում է: Եթե անցյալ տարի գործազրկներ յեղել են 56.533 հոգի, ապա այս տարի այդ թիվը անցել և 60.000-ից: Վերտանդից ե դալիս այդ աճումը: Մենք գիտենք, վոր գործազրկության գլխավոր աղյուրը ագրարային տեղափոխությունն և և մեր զպրոցների արտադրությունը, վորը դեռ ևս հարմարեցված չե մեր անտեսության կարիքներին բավարարելուն, և տալիս ե ատաեստատը զբանում կրթված մարդ, առանց գործնականի: Միաժամանակ, մենք գիտենք, վոր մեզ մոտ բանվորական ույժի քանակի արագցուա աճեցման հետ, մեր ինդուստրիալ զարգացման արագ ահմագի հետ միասին, նկատվում ե գործազրկների անզգալի առկոս վորակյալ բանվորների մեջ:

Գործազրկության գեմ կոսի միջոցները տարրում են պետական գծով (սոց. ապահովագրություն, նպաստներ տալը, աշխատանքային կողեկտիֆիկատում և այլն) և պըոփմիությունների ռդնության գծով. Մեր սոցազի բյուջեն աճել է ու գարձել մի սոլիդ՝ գումար՝ 30 միլիոնից ավելի. հասկանալի յի, վոր այս բնագավառումն ել վերացվում և գործազրկությունը. Մենք մեզ համար այդ տեսակետից մեծ իւլյուզիաներ չենք ստեղծում, մեզ

շենք քնացնում և առավել ևս չենք խաբում բանվոր դասակարգին խստումներով, թե մոտակա տարիներում վերջ կտանք գործադրկությանը. սակայն մեր շինարարությունը, գյուղատնտեսական արդյունաբերության զարգացման տեմպը, վոր մատնանշված և 5 - ամյա ծրագրում, վորը կներկայացվի XV - րդ կուսհամագումարին, գյուղատնտեսության առաջխաղացումն աշխատանք կլանող կուլտուրաների տարածման գործում, վորոնք թե վորակով և թե քանակով մեծ բանվորական ույժ են պահանջում, —այս բոլոր միջոցները հիմնական առանցք կբանան այն չարիքի մեջ վորը հանդես և գալիս իրեն գործադրություն:

## U b r p j n u y b 6

Սեր Անդրկովկասյան պետական բյուջեն աճել է, դառնալով  
մի խոշոր մեծություն՝ 85 միլիոնից ավելի: Յեթև սրան ավելաց-  
նենք տեղական բյուջեն, վորը այս տարի առաջին անգամ և ձե-  
փակերպված, մենք Անդրկովկասյան բյուջեյի մեջ կունենանք մո-  
տավորապես 160 միլիոն ռուբլի, վորը մեղ հնարավորություն  
կտա ծայրը ծայրին հասցնել: Անշուշտ, մենք չենք կարող պար-  
ծենալ, թե մեր բյուջեում վոչ մի բան չկա ուզգելու, թե այնտեղ  
սրբագրելու բան չկա: Մըրագրություններ և ուզգութներ դեռ  
պետք ե մուցնենք մի շարք տարիների ընթացքում: Իսկ այժմ  
մենք պետք ե արձանագրենք, վոր բյուջեն փոփել ե իր ներքին  
հատկությունը, իր եյությունը: Մեր բյուջեն աստիճանաբար,  
սպառովականից, աղմբնիստրատիվ—վարչականից դառնում և ար-  
տագրողական բյուջեն: Մա բյուջեյի բնորոշ առանձնահատկու-  
թյունն է թե ընթացիկ և թե գալիք տնտեսական տարում: Այս  
բանին ոգնել ե զգալի չափով այն վորոշումը, վոր մեր կօւսակ-  
ցաւթյունն ընդունել և 20 տոկոսով կրճատելու համար աղմբնիս-  
տրատիվ ծախսերը, համապատասխան կրճատման յենթարկելով  
պետապարատը: Հասկանալի իւ, վոր այս կրճատութները լիովին չեն  
զուգագիպում: 1925/26 թ. ժողովրդական տնտեսության ֆինան-  
սավորման ծախսի տեսակաբար կշին արտահայտվում եր 12,13<sup>0</sup>/ով,  
1926/27 թ. 23,3<sup>0</sup>/ո-ով, իսկ 1927/28 թվին բյուջեյի արտադրողա-  
կան մասն արդեն կազմում է 27,4<sup>0</sup>/ո: Յեթև սրա մեջ առնենք նաև  
յերկաթուղթն, փոստը և հեռագիրը, այս մենք արդեն մեր բյու-  
ջեում կունենանք 54,8<sup>0</sup>/ո ծախս, վորն ուզգված ե մեր հանրա-  
պետությունների արտադրողականությունը բարձրացնելուն:

Սրան կից պետք ե հիշել մեր հիմնական գյուղացիական առուրքը — զյուղատնախական հարկը: Դուք պիտեք, վոր ոպողիցիան շատ հաճախ և փորձում այս հարցում՝ իր բավականաչափ բթացած ատամները: Մարդիկ, վորոնք գեր յերեկ բրթորթում եյին այն մասին, թե գյուղական տնտեսությունը պետք ե խորհրդային արդյունաբերության գաղութը լինի, վորոնք կամենում եյին ամբոխավարական ձեռվ դնել հարցն այն մասին, թե խոդուարիայի ամրող ծանրությունը պետք ե ընկնի գյուղացու ուսերի վրա, այդ մարդիկ այժմ հանդես են գալիս իրեկ փոշմանած ազնվականներ, խոնարհությամբ գնում են գյուղացիության մոտ և նրա առաջ վարկարեկում մեր քաղաքականությունը գյուղում, առանձնապես վարկարեկելով մեր գյուղատնտեսական հարկը: Ոպողիցիան վաղուց ե ինչ պահանջում ե, վոր գյուղացիության  $40\text{--}50\%$ -ն ազատվի հարկից, ըստ յերեսութին կարծելով, թե դա ինչ վոր նոր բան և Միության բոլոր շրջանների համար. սակայն Անդրկովկասի համար ոպողիցիայի այդ չափը վաղուց մենք անցել ենք արդեն անցյալ և նախանցյալ տարիներում: Զե՞ վոր անցյալ տարի մենք Անդրկովկասում ունեինք գյուղատնտեսական հարկից ազատվածներ —  $49\text{--}50\%$ -ով: Գամաճային, չքավոր գյուղատնտեսական շրջաններում ազատվածների թիվը համար է  $75\%$ -ի: Այսպես ե զրությունն որինակ Արևմտյան Վրաստանի մի քանի շրջաններում: Աս նշանակում ե, վոր մենք ձիւտ ենք կիրառել ընդհանուր քաղաքականությունը կուսակցության և խորհրդային իշխանության — այս հարցում, համաճայն տեղական պայմանների: Անշուշտ, այսպիս չե գործը Միության ավելի հարուստ շրջաններում: Բայց այստեղ ևս, ինչպես գիտեք, տոկոսը բավականին բարձր է, իսկ ենագործկոմի հորելյանական սեսիան ել ավելի ավելացրեց:

Գյուղատնտեսական հարկը, գյուղկուպերացիան յեվ  
վարկային ընկերությունները

Այս տարի գյուղատնտեսական ավելի յէ լավանում, գյուղատնտ. հարկի ստրուկտուրան, նրա հաշվառքը և գանձումն ավելի պարզուց, դասակարգային բնույթ և կրում: Անդրկովկասի համար մենք ստացել ենք գյուղատնտեսական հարկից հետեյալ գումարը —  $5.500.000$  սուբք: (Անցյալ տարվա հաշիվը —  $6\frac{1}{2}$  միլ. ոնդրի, ոեալ բան դուրս չեկալ): Այս գումարը —  $5.500.000$  սուբքին,

բաշխված ե հետեյալ կերպ — համաձայն հարկադրման ծանրության, ըստ գրուպպաների. — ազգաբնակության այն գրուպպան, վորը յեկամուտ ունի — ըստ ուսողի —  $20$  սուբք, և վորը  $40$  տոկոսից ավելին և կազմում ազգաբնակության — վճարել և միայն  $2\%$  տուրք:  $40$  սուբքի յեկամուտ ունեցողը — ամեն մի ուտողի վրա հաշված — (ազգաբնակության  $37\%$ ) վճարել և ամբողջ տուրքի  $12\%$ -ը.  $80$  ո. յեկամուտ ունեցողը (ազգաբնակության  $18\frac{1}{2}$  տոկոսը) վճարել և տուրքի  $42\%$ .  $125$  ո. յեկամուտ ունեցողը — ( $2,5\%$  ազգաբնակության) վճարել և տուրքի  $20\%$ , և վերջապես այն գրուպպան, վոր  $125$  սուբլուց ավելի յեկամուտ ունի և Անդրկովկասում միմիայն  $1$  տոկոսն և կազմում ազգաբնակության, վճարել և ամբողջ տուրքի գումարի  $18$  տոկոսը:

Գյուղատնտեսական առուրքի մասնագրման ծանրությունը, համաձայն գրուպպաների, արտահայտվում է հետեյալ թվերով. — գյուղական ազգաբնակությունը, վոր յեկամուտ ունի  $25$  —  $40$  ո. (առանց հաշվելու վոչ գյուղատնտեսական յեկամուտը), իբր գյուղատնտեսական հարկ վճարում ե իր յեկամուտների  $1,9\%$ , մինչդեռ ազգաբնակության այն մասը, վորի ամեն մի ուտողին յեկամուտ և հաշվում  $50$  —  $60$  սուբք, իբր գյուղատնտեսական հարկ տալիս ե  $6,4\%$  իր յեկամուտից.  $80$  —  $100$  սուբք. յեկամուտ ունեցողը վճարում ե —  $10,7\%$ , իսկ  $150$  ո. ավելի ստացողը վճարում ե —  $18,6\%$ :

Ասել, թե գյուղատնտեսական հարկը վորոշելիս և բաշխելիս մենք չունենք դասակարգային մոտեցում, դա կնշանակի ասել միանգամայն վոչ ճշմարտություն, դա կնշանակի ուղղակի բամբասել կուսակցության և այդ աշխատանքի գործնականը:

Գյուղատնտեսական առուրքի վերաբերությամբ Անդրկովկասում մենք հասանք այն կետին, վորից մենք արդեն շղափեցինք ճիշտ հողը և մեր առուրքերը չեն ծանրանում չքավոր ու միջին գյուղացիական տնտեսությունների վրա: Այդ տուրքը շփոթություն չի մտցնում, չի փչացնում հարաբերություններն այնպես, վոր մենք խճճվենք նրանց մեջ:

Ոպողիցիայի վոչ մի զրպարտություն չպետք ե մեզ պոկի այդ գերքից:

Ի՞նչպես են ծառայություն մասառցանում մեր բանկերը մեր տնտեսության, Մեր բանկերը կոչված են լինելու մեզ մտության պարագի և թե գյուղի արտադրական ույժերի գարդացման լծակը: Արդյոք մեր բանկերն ի կատար եյին ածում այդ ինդիբը. Ի հար-

կե, պետք ե հաշվից հանել այն թերություններն ու սխաները, վորոնք անխուսափելի յեն ամեն մի — մանավանդ այդորինակ — աշխատանքում:

Կա, ի հարկե, մի վորոշ անհամաշափություն ախորժակների, առանձին տնտեսական մարմինների որինավոր պահանջների և այն միջոցների միջև, վոր ունեն բանկերը: Բայց ներկա բռպեցին մենք չենք կարող կասկած ունենալ այն մասին, վոր բանկերը ճիշտ և իրենց միջոցներին համապատասխան չեն ուղղում վարկային հոսանքը: Յետ չեմ ուզում հրապարակել գոյություն ունեցող ցուցադրական թվերը: Կմատնանշեմ միայն, վոր մեղ մոտ վարկն ավելի կամ պահաս չափով կարծ ժամանակյա յե, իսկ մենք պետք ե անցնենք յերկարժամանակյա վարկավորման սիստմին, վորովհետև հակառակ դեպքում կորչում ե վարկի ազդեցությունը:

Մյուս կողմից մենք պետք ե մնաս բարով տաենք մասնավոր սեկտորին: Այդ վերջին պատվերը մենք ի կատար ենք ածել: Բանկերն արդեն ձեռք են զարկել մասնավոր սեկտորի պարտքերին վերջ տալուն: Առ 1-ն 1925 հոկտեմբերի մասնավոր սեկտորի բոլոր բանկերին ունեցած պարտքերի գումարն եր 5,2 միլիոն ռուբի կամ 6,9 տոկոս՝ բանկերի վարկային գործողությունների ընդհանուր գումարի համեմ: Անցած տարվա ընթացքում մասնավոր սեկտորը (բացառությամբ այն վաճառականների, վորոնք վարկ եյին ստանում Արտաքին առևտորի բանկի բանկային բաժանմունքից) վարկավորվում եր բացառապես փոխադարձ վարկի ընկերության միջոցով: Այդպիսով, մեր բանկերն արդեն մնաս բարով են առել մասնավոր վարկավորվողներին: Մասնավոր սեկտորի ղարստքերն առ 1-ն 1927 թվի հոկտեմբերի կազմում եյին արդեն 1.114.000 ռուբլի և այդ գումարի մեջն եյին պարսիկ վաճառականների, ինչպես նաև փոխառության որլիգացիաների վրավականով վերցված 482.000 ռուբլու պարտքերը:

Յեթե ուշադրության առնենք, վոր վերջին կատեգորիան, այսինքն փոխառությունների որլիգացիաների գրավականով վերցված պարտքերն ընկնում եյին զլիավորապես մեր խորհրդային հիմնարկությունների բանվորների ու ծառայողների վրա, առաջետք և հաստատենք, վոր կուսակցական դիրքետիվան ի կատար ածվել մեր բանկերի զեկավարների կողմից միանգամայն կոմմունիստական կերպով և վոր ի կատար և ածվել մասնավանդ Պի-

տական բանկի գլխավոր «բռունցք» — ղեկավար ընկ. Ֆեյյուկի ձեռքով:

Գյուղատնտեսական վարկը կոչված ե ամրապնդելու տնտեսությունը կապիտալիստական տնտեսության հասարակական տարրերն ամեն ավելի ուժեղ կերպով ու պնդանան: Այդ վարկին արդեն մի պատկառելի ույժ է ներկայացնում, դա արդեն մի մանր վոլորմություն անելու սիստեմ չեւ: Այստեղ արգեն գոյություն չունի այն ժամանակաշրջանը, յերբ բանկի վարչությունն առաջին անդամ նիստ կայացրեց այն նպատակով, վոր վորոշում կայացնի կանարոնից բաց թողնված 700.000 ռուբլին բաշխելու մասնին, բաժանում այդ գումարն «յեղբայրաբար» յերկրագործության ժողովում: Կոմիսարիատների միջև ու ինքը ցրվի: Գյուղատնտեսական վարկի սիստեմը վերածվեց գյուղատնտեսության զարգացման մի հղոր լծակի: Նա գուավ իր ճիշտ՝ կազմակերպչական ու ֆինանսական հունը՝ ճիշտ քաղաքականություն հաստատվելու միջոցին: Այդ սիստեմն այժմ մի հիմնական լծակ և գյուղացիական տնտեսությունների զարգացման և մասնավանդ գյուղացիական բնակչության ամենահետաքննաց շերտի՝ գյուղացի շքավորների՝ բարձրացման համար:

Յետ ի նկատի ունենալով ժամանակի սղությունը՝ առաջ չեմ բերի թվանշանները, սակայն կրկնում եմ, վոր ամբողջ զծի վրա, մեր գյուղատնտեսական վարկային սիստեմի աշխատանքի բոլոր արտահայտություններում մենք տեսնում ենք ամրապնդման և այն բոլոր պրոբլեմներին ճիշտ կերպով մոտենալու նշանները, վորոնք առաջ են քաշվում այդ բնագավառում: Յետ կհիշեմ գյուղատնտեսական վարկի սիստեմով գյուղական բնակչության կոռպերացման յենթարկելու վերաբերյալ մի քանի թվանշան միայն: 1924 թվին մենք այդ առիթով ունեյինք կոռպերացման 3,4 տոկոս, 1925 թվին՝ 10,1 տոկոս, 1926 թվին՝ 15,4 տոկոս, իսկ առ 1-ն 1927 թվի հուլիսի՝ արդեն 21 և կես տոկոս:

Ի հարկե, այդ բոլորը չեւ, ինչ մեղ հարկավոր ե, սակայն զայուց և ապահով վոր ճիշտ կերպով և կատարվել մեր աճումը: Յեթե այդ պրոցեսն առաջ ընթանա նույն ուղղությամբ, — իսկ նա պետք ե ընթանա այդ ուղղությամբ, — ապա մենք կվարողանանք հուսով նայել վաղվա որվա վրա: Գյուղատնտեսական վարկի և գյուղատնտեսական կոռպերացիայի սիստեմի միջոցով մենք կվարողանանք տիրապետել մեր գյուղի տնտեսության սանձին,

վորպեսզի ավելի պինդ կապենք նրան արդյունաբերական ինդուստրիայից և առաջ շարժվենք մի ընդհանուր ֆրանտով:

### Գյուղատնտեսական կոռպերացիան — ուշադրության կենտրոնում

Գյուղատնտեսական կոռպերացիայի վերաբերությամբ յես պետք է ասեմ, վոր Անդրկովկասում նա չկարողացավ տալ այն, ինչ մենք կարող ենք ու պետք է սպասենք նրանից: Այդ սխառամքը դեռ գտնվում է իր առաջին աճման ժամանակաշրջանում, վորն, ինքնը սպասության հասկանալի յի, կապված է մի քանի թերությունների ու սխաների հետ: Սակայն աճումն ակներև է:

Ամբողջ անդրկովկասյան սխառեմից անցյալ տարի գուրս ընկավ Վրաստանի «Խշանավոր» Ծարմոկավշիրի գյուղատնտեսական կոռպերացիան, վորի վերականգնող ոպողիցիոները մատների արանքից կորցրեց 4 միլիոն ռուբլի, ունենալով առողջ վարիցանց: Դա վկայում է այն մասին, վոր կործանված Ծարմոկավշիրի մյուս յեղբայրակիցներն ու քույրերը պետք է զգույշ լինեն: Ճիշտ ե, Ծարմոկավշիրին ժառանգ ունեցավ ի գեմս «Սովորիս կավշիրի»-ի: Ստ արդեն կտորուցված է տռողջ սկզբունքների վրա, ղեկավարվում է այն կերպով, վոր ամբողջովին յերեսը շուրտ տված ունի գյուղի, գյուղատնտեսության կողմը, նա արդեն գտնել է ճիշտ հող, սակայն այդ հողը հարթ չե: Այդ հողը վարդերով չի ծածկվել:

Գյուղատնտեսական կոռպերացիան, վորը կոչված է իրականացնելու ամենաղեղաքար խնդիրը գյուղացիական յերկրում սոցիալիզմի կառուցման միջոցին՝ (զժվար՝ թե անտեսական և թե քաղաքական տեսակետից) պետք և ընդգրկի թուլացած գյուղացիական տնտեսությունները: Յեվ վորքան ել այդ կոռպերացիան կազմակերպությունների յույց տված համակրության շնորհիվ, վորքան ել այդ գյուղատնտեսական կոռպերացիայի սխառեմը ճիշտ ղեկավարվի նա իր ընությամբ դեռ ևս չի ապահովված սխանեղի առաջնամեծ գժվարություններից: Սակայն այն, ինչ պատճեն Մարմոկավշիրին՝ այլ ևս չպետք է կրկնվի: Ծարմոկավշիրին պատահած պատմությունը կարծես հանդիսավում է այնպիսի մի պատմություն, վորը դիմում է մյուս նման սխառեմներին ու տառամ:

«Զեր մասին զրպարտություն է նման

հորինվում, յեթե դուք նույն սխաներն անեք, ինչ վոր անում եք Ծարմոկավշիրին, այսինքն չկուտակելով սեփական կապիտալ կամենաք խաբել տնտեսական որենքներին, կամենաք բացառապես ուրիշների միջոցներով սեփական կապիտալ ստեղծել, ապա այդ ձգտությունը միշտ անաջողության կհանդիպեն»: Արդյոք վար կազմակերպությունը կարող է հաստատում մասը, յեթե յերեք միլիոնի շրջանառության միջոցին 4 միլիոնի փոխառության միջոցներ ունենա: Վոչ մի նույնիսկ ոպողիցիոն՝ կախարդ, յեթե նա մինչկ իսկ զրադի՛ իրեն հանձնարարված գործով չի կարող այդ խնդիրն իրականացնել: Իսկ յեթե ոպողիցիոնները զրադի՛ այն գործի քանդիլովը, վոր կատարել եյին կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը՝ ի հարկե, հետեւանքում պետք է արաքվեր Ծարմոկավշիրին: Դա մի նախազգուշացումն և մյուս կոռպերատիվային սխառեմների համար, վորոնք պետք է իրականացնեն մեր սոցիալիստական շինարարության ամենապատասխանատու և դժվար գործը գերազանցուակես գյուղացիական մի յերկրում, այն ե—կոռպերացիայի միջոցով հաղորդակից դարձնեն գյուղատնտեսությունը՝ պրոլետարական սոցիալիստական տնտեսության:

Գյուղատնտեսական կոռպերացիայի շուրջը պետք է կենտրոնացվին ամբողջ ուշադրությունը, բոլոր միջոցները, մեր բոլոր գեկավարող ույժերը: Մենք պետք ե ոգնենք գյուղատնտեսական կոռպերացիային, վորպեսզի նա հաստատում կերպով վոաքի կանգնի:

Այդ առիթով բնականաբար հանդես է գալիս այն հարցը, թե ինչպիսի վարկեր են արվում չքավոր տնտեսություններին:

Ներկա բոպեյին առաջ է քաշվում վոչ միայն իրական ոպությունն ուժեղացնելու, այլ նաև այն հարցը, թե պետք է ուժեղացվի ղեկավարությունն այն մտքով, վոր ստեղծվեն այնպիսի համապատասխան կազմակերպություններ, վորոնք բարձրացնեն չքավոր գյուղացիներին, ամուր կերպով դրանց վոաքի կանգնեցնեն, այսպես անել վոր այդ չքավոր տնտեսությունը զեպի առաջ շարժվի սոցիալիզմի ուղղությամբ:

Չքավորներին հատկացված փոնզը վորոշ չափով բարեգործական բնույթը եք կրում: Չքավորների փոնզի վերաբերությամբ իշխանությունը — վորը գեռ ևս բավական ուժեղ չեր ֆինանսապես — լոկ մի վործ եք անում վորեւ բան հատկացնել չքավորներին, վորեւ բան անել, վորպեսզի գրնե սկսի ոգնությունն ուժե-

գացնելու այն պրոցեսը, վորը համապատասխան ֆինանսական միջոցներ եր պահանջում: Այդ պատճառով վերջին տարիներին չքավորների ֆոնդը չեր կարող այնքան հզոր լինել վոր կարելի լիներ սպասել առանձին հեղաշրջումներ գյուղացիական տնտեսության չքավորների սեկտորում: 1925—26 թվին մենք ունեցինք ընդամենը 520.000 ռուբլի, վորը բաց ելն թողել հանրապետությունների գյուղատնտեսական բանկեր՝ չքավորներին ողնելու գործը կազմակերպելու համար: 1926—27 թվին մենք այդ գործի համար ունեցինք ընդամենը 550.000 ռուբլի: Ուրեմն յերկու տարվա ընթացքում մենք ունեցինք 1.070.000 ռուբլի: Ի հարկե, զա գեռ քիչ ե, բայց մենք արել ենք առաջին քայլերն այն սիստեմատիկական կամպանիայի համար, վորը հաշվված ե մի շարք տարիների, մի ամբողջ սերնդի համար: Մենք յերկու տարվա ընթացքում բաց ենք թողել 1.070.000 ռուբլի: Մի քանի տեղական միջոցներ, ինչպիսիք են գյուղատնտեսական բանկերի վաստակից կատարված հատկացումները, հանրապետությունների ժողկոմիսորների տված նվերները՝ — մեծացրին այդ գումարը մոտավորապես մինչև 1.700.000 ռ: Կրկնում եմ — գա քիչ ե: Մկրում կարծես թե մի բան եր, իսկ ներկա բոպեյին մենք պետք ե կրկնապատկենք մեր ուշագրությունն այն ուղղությամբ, վոր գյուղատնտեսությունն իր չքավորներին վերաբերյալ մասում զինվի ու վերազինվի ավելի արագ:

Ի՞նչ ճանապարհով պետք ե մենք իրականացնենք այդ: Ընկերներ, գուք անշուշտ տեղյակ եք մեր Միության մեջ տեղի ունեցող կոլեկտիվ տնտեսական շարժման հետեւնքներին: Յերկրի ոգտագործման կոլեկտիվ ձեերով գյուղացիությունն ընդգրկելը վոչ թե մեկ, այլ յերկու, գուցե և ավելի սերունդների դորձ ե, վորովհետեւ այն պատճական ունակությունները, վորոնք շերտերով դարաված են գյուղացու հոգեբանության մեջ և գյուղական կյանքի ամբողջ կազմում՝ մզում են գյուղացուն, ինչպես մզում եյին նրան նաև մինչև այժմ՝ մասնավոր տնտեսությունն ունենալու, յերկրի ոգտագործման հասարակական ձեերից մեկուսացած լինելու կողմը:

Խորհրդային իշխանությունն առաջին անգամ ե մտածում շուր տալ այդ պատճական շերտերը՝ իր ամբողջ կազմվածքով, ամբողջ կազմակերպչական հիմքերով ու իր ամբողջ քաղաքականությամբ: Յեթե մենք այդ անենք, յեթե մեզ այդ աջողվի, ապա հենց գրանով կրացվի ճանապարհ կոլեկտիվացման համար, մի

Ճանապարհ, վորով կմշակվի գյուղացու համապատասխան հոգեբանությունը, կպատրաստվեն գյուղում սոցիալիզմ՝ անցկացնելու նյութական ու հոգեու հնարավորությունները: Մի շարք սերունդների նկատի ունեցող այդ խնդիրը կլուծվի, բայց նրա հսկայական լինելու պատճառով մենք չկարողացանք առանձին հետեւնքների համար այդ ուղղությամբ մեր Միության մինչև իսկ այն սակագաթիվ ույսոններում, վորաեղ յերկիրն ոգտագործելու: Նույն իսկ նախնական հասարակական ձեերը վորաց տրագիցիաներ ունեն: Իսկ մեզ մոտ, Անդրկովկասում, մասնավոր ու ծիսական սեփականությունը հանդիսանում է գյուղացիական տնտեսության հիմնական ֆոնդ:

Այդ պատճառով մենք չենք կարող հուսալ, վոր գործն արագորեն առաջ գնա: Միության մեջ յերկրի ոգտագործման հասարակական ձեերի (կոլեկտիվ տնտեսություններ, կոմմունաներ, արտեխներ և այլն) շուրջը խմբված են մոտ 22.000 տնտեսություն: Իսկ Անդրկովկասում ընդգրկենք մի քանի հարյուր են: Մտիպում ենք հաստատել, վոր մեր աշխատանքի այդ մասն անուշագրության հնք մատնել, մենք չունենք ճիշտ թվանշաններ, չգիտենք, թե վորտեղ և ինչ բնույթի միացյալ տնտեսություն ունենք: Բանվորացյուղացիական տեսչության և Գյուղատնտեսական բանկի թվանշանները տարբեր բաներ են ասում: Հստ Գյուղատնտեսական բանկի ունեցած տեղեկությունների մենք ունենք Անդրկովկասում 43 կոլեկտիվ տնտեսություն, 144 — մեքենաների վերաբերյալ ընկերություն, 77 — արտել, 9 — կոմմունա, ընդամենը 273 միավոր՝ 7.281 անդամներով, միջին հաշվով 27 անդամ ե ընկնում մի միության վրա: Խորհրդային տնտեսությունների թիվը 46 ե:

Յես չգիտեմ, թե վորքան «սոցիալիստական» են դրանք, բայց համենայն զեսպ կարող եմ հաստատել վոր հենց այդ խորհրդային տնտեսությունները, վորոնք առաջին հերթին կոչված են ցուցագրական տնտեսություններ լինելու շրջակա գյուղացիության համար՝ կարծես մինչև այժմ չեն ի կատար ածում իրենց հիմնական խնդիրը: Ինարկե, այդտեղ կան շատ մեղմացնող հանդամանքներ — դրության բավարար չափով կարգի բերված չիններ, միջոցների բացակայությունը, կազմակերպված վարժությունների բացակայությունը և այլն:

Խորհրդային տնտեսությունները պետք ե գառնան այնպիսի ցուցագրական անտեսություններ, վորոնք մատնանշեն գյուղացներին այն վարդիա որը, վորին սրանք հաղորդակից են լինելու:

Յերկրի լավագույն մշակման, նորագույն տեխնիկայի հիման վրա լավագույն տնտես լինելու տեսակետից խորհրդային տնտեսությունները պետք ե հանդիսանան վաղվա զյուղի դեմքը։ Սակայն այդպիսի մի կազ խորհրդային տնտեսությունների և շրջակա բնակչության միջև կարծես դեռ ևս գոյություն չունի։

Ինչ վերաբերում ե կոլեկտիվ տնտեսություններին, նրանք, կրկնում եմ, այնչափ չեն տարածվել մեզ մոտ, դեռ ևս այնպես չեն սարքվել վոր կարողանան դառնալ հիմնական բջիջներ՝ ձեր դարդանալու համար զյուղում։

Ճիշտ ե, կաթնային տնտեսության մեջ ստեղծվել են հզոր միացումներ թե կազմակերպչական, թե կազմակետավի շրջանառության և թե տնտեսավարության տեսակետից։ Բայց դեռ ևս չկա այն դրությունը, վոր դա կարողանա մակարդ դառնալ շրջակա գյուղացիության համար։ Կոլեկտիվ տնտեսությունների հարցն առաջին պլանումն ե դրվել կենտրոնական կոմիտեյի ԽՎ համագումարի առթիվ պատրաստված թերթիներում։ Մեր դյուցի կուլտիվ տնտեսությունները պետք ե զրավեն ավելի մեծ ուշադրություն, քան այդ լինում եր մինչև այժմ։ Դա կինդ նաև չքավորների հարցի լուծում։ Մյուս կողմից դա կլինի նաև այն հարցի լուծումը, վոր մեր գյուղն աստիճանաբար սոցիալիզմին հաղորդակից լինի հենց վոչ միայն յերկրի ողտագործման, այլ նաև արտադրության պրոցեսների հասարակականացման միջոցով։

### Կոռպերացիան ամրապնդվում է

Այդ առթիվ պետք ե ասել մի քանի խոռը մեր սպասողական կոռպերացիայի մասին։ Սպասողական կոռպերացիան արդեն այլ ևս այն չե, վորպիսին եր նա 1923 թվին մեր արդյունաբերության ձգնաժամից հետո և վորն ուղղակի ու անուղղակի հարցած հասցրեց կոռպերացիային։ Ներկա բոպեյին դա մի հզոր կազմակերպություն ե, վորը, ճիշտ ե, ունի մի քանի թերություններ, սակայն բավականաշափ կազդուրված ե։ Նրան արդեն կարելի յե համարել իսկական ժողովրդական մասսաների մի իսկական կազմակերպություն։ Ներկա բոպեյին դժվար ե ասել, թե վար աստիճան ե զարգացել կոռպերացիայում այն «կուլտուրականությունը», վորը պահանջում եր ընկ. Կենինը կոռպերացիայի համար, այն կուլտուրականությունը, վորը պրոլետարիատի դիկտա-

տուրայի մեր պայմաններում և կոռպերացիայի բնության հետեւանքով կարողանալ տալ սոցիալիզմի բոլոր տարրերը։

Իր հզորության և ամբողջության համար կոռպերացիան, ինչպես նաև նրա՝ պրոլետարական հեղափոխության շնորհիվ ստեղծված՝ բանվորական ճյուղը տալիս են ներկա բոպեյին բարելավման պատկեր բոլոր ուղղություններով։ Յեթե վերցնենք մեր կոռպերատիվային ֆեդերացիան՝ (Զակումուղը) դա այս բոպեյին արդեն այն տկար կազմակերպությունը չի, ինչպես նա եր 1923—1924 և մինչև իսկ 1925 թվին։ Դա արգեն մի բավականաչափ կազմակերպություն ե, վորը ունի մոտ 19—20 միլիոն ուղևոր շրջանառություն (գլխավոր պայմանագրերի սիստեմի հետևանքում)։ Բայց առանց դրան ել Զակոյուղի նշաններն արտացոլում են հանրապետական և վարի կոռպերատիվային ողակների կազմակերպման աջողությունները։

Յեթե մենք մինչև որս կարող ենքնք կասկած ունենալ այն ձականամարտի վախճանի վերաբերությամբ, վորը վարում է կոռպերատիվային ու պետական առևտուրը մասնավոր առևտրի դեմ (մասավանդ այստեղ մեզ մոտ, վորակեղ մանր առևտուրը մեր քաղաքների, ավանների ու գյուղերի ֆոնդն ու պատկերն են ներկայանում), ապա ներկա բոպեյին կասկածներ չկան այն մասին, վոր կոռպերատիվային ու պետական առևտուրն արդեն զրավում ե այնպիսի մի տեսակարար կշիռ ընդհանուր շրջանառության մեջ, վորն անհնարին ե դարձնում ամեն տեսակ յերկյուղներ պետական կոռպերատիվային սեկտորի՝ մասնավոր սեկտորի հետ ունեցած մրցության վերաբերությամբ։ Մասնավոր առևտրի աձունն ընկնում ե, տեղ-տեղ նա ներկա բոպեյին համառ և 22 տոկոսի։ Յես չեմ խոսում մեծաքանակ առևտրի մասին. այդտեղ իշխում ե պետական և կոռպերատիվ առևտուրը։ Մասնավոր առևտրի գիրքերը հետզհետեւ ընկնում են, ընդումին բնորոշ ե, վոր մասնավոր առևտրի գուրս մզվելու հաշվին ուժեղանում ե հենց կոռպերացիան։ Մեր սեղմաքային գիրքը ճիշտ ե այդ հարցում այն մտքով, վոր մենք շեշտը ընկնում ենք կոռպերատիվ սեկտորի վրա, մինչդեռ պետական սեկտորը հանդիսանում ե վորպես մի ժամանակավոր ոժանդակիչ, կամոնավորող մոմենտ։

Յես կանգ չեմ առնի մեր տնտեսության մեջ զոյություն ունեցող հասարակականացման մյուս պրոցեսների վրա։ Այդ թվանշանները ցուցադրական կլինեյին, յեթե մենք ունենալինք մեր գյուղացիական տնտեսությունների շերտավորման ճիշտ պատկերը։ Վ

Սակայն մենք առայժմ չենք կարող ձեզ ներկայացնել այդ պատկերը: Այդ պատկերը միմիայն ներկա բոպեյին և բացվում: Անցյալ տարի մենք ընտրությամբ գնում ենք գյուղական անտեսությունները, սակայն այդ ընտրությամբ կատարված հետազոտությունները գեռ ևս չեն տվել այն պատկերը, վորի հիման վրա մենք կարողանայինք առել, թե «ահա մեր խորհրդային գյուղի դեմքը, ահա թե շերտավորման ինչպիսի պրոցեսներ են կատարվում այնտեղ ներկա բոպեյին»: Ներկա բոպեյին կատարվում են յերկրորդ հետազոտման մշակումը, վորն արդեն յերկրորդ մոտեցման կարգով կտա վորոշ շոշափելի նյութեր: Այն ժամանակ մենք կկարողանանք տալ ավելի կամ պակաս ճշտությամբ մեր գյուղի շերտավորման պրոցեսի պատկերը:

Յես անցնում եմ մեր ներքին առևտորի մոտով: Արտաքին  
առևտորի մասին պետք ե ասել, զոր մենք պետք ե սեղմելինք մեր  
արտահանությունը, ի նկատի ունենալով մեր ներքին արդյունա-  
բերության զարգացումը: Հում նյութեր մենք պետք ե տայինք  
Միութենական և տեղական արդյունաբերությանը և այդ պատճո-  
ռով ավելի քիչ եյինք արտահանում հենց այն, ինչ սկզբում իրակ  
արտահանելի ապրանք՝ հատկացված եր արտասահմանի համար:  
Բայց այստեղից մեր առաջ առեղծվածք կանգնեց այն մասին, թե  
ինչպես վարդել վայրուտայի հետ. յեթե ունենանք բացասական  
առևտրական հաշվեկշիռ արտասահմանյան առևտրից, դա կենի  
հարված մեր սնտեսությանը, բյուջեյին ու վայրուտային: Այդ  
պատճառով կուսակցության խնդիրն եր ուժեղացնել այն յերկրո-  
դական մթերքների արտահանությունը, զորոնք յերբեմ իզուր  
թափված եյին, իզուր կորչում եյին, իզուր պորձադրվում եյին  
տեղերում, մինչդեռ կարող եյին գառնալ վայրուտա:

Այդ պրոցեսը միայն այժմս և զարգանում է Մենք տակավին չենք ոգտագործել բոլոր ռեսուրսներն այդ բնագավառում. որի նաև՝ յերբ մեր գիտեն ու հանքային ջրերն այդ արտահանության մեջ տալիս են միանգամայն չնչին ոգուած: Բայց չե՞ն զոր մեր յերկիրը գիտու, յերբեմն շատ լավ գիտու յերկիր ե, հանքային ջրերի յերկիր ե: Յեթե մենք ճշշում զործ չդնենք այդ ճյուղի վրա, յեթե մենք նյութեր չժողովենք յերկրորդական արտահանության համար, ապա չենք զայի այն ճեղքը, զոր բացվել ե մեր արտահանության մեջ՝ մեր հում նյութերը վերամշակող խորհրդային ֆաբրիկաների և գործարանների արտադրության ավելացման հետեւանքում: Մենք նույնիսկ ստիված ենքնք խախտել արտասահ-

մանյան Փիրմաներից մեկի հետ կապած պայմանագիրը և չտալ խոստացած քանակությամբ մետաքս, վորովինետև մեզ մոտ դա չի բավականանա մեր սեփական Փաբրիկաների համար. Մասնագորապես Աղբբեջանն ունեցել է 20 հազար փութ չոր կոկոնի գե-Փիգիտ:

**Զկա իուրիդային բաղաքացի առանց կուլտուրական  
պահանջների**

Դիմում հմ այժմ մեր կուլտուրական հեղափոխության հարցին: Յերբ յետամեաց, զյուլզատնտեսական յերկրում նոր և գարգանում տեղական հում նյութերով աշխատող արդյունաբերությունը, դա չե կարող չանվանվել արդյունաբերական հեղափոխություն: Յերբ Խորհրդային իշխանության շրջապատի մեջ, պրոլետարիատի գիլտատուրայի դեկավարությամբ, կատարվում է սոցիալիզմի շնարարություն (վհայ սոցիալիզմի հիմքի, այլ և պատերի), արդյունաբերական զարգացման այդ սրոցեալ չի կարող չլրացվել կուլտուրական հեղափոխության պրոցեսով:

Մեր շինարարությունը կլինի միակողմանի, յեթէ մենք չունենանք փորակյալ բանվորական ույժ, չունենանք համապատասխան ինտելիգենտ ուչիքեր, վորոնք իրենց աշխատանքով աջակցում են սոցիալիզմի շինարարությանը և հօգեստը ու կուլտուրական ուժերի վերելքին, վորպեսզի այդ շինարարության մեջ մենք լսենք վոհ միայն սոցիալիստական արդյունաբերության շինարարության յերաժշտությունը, այլ և ազատ աշխատավոր մարդկության նոր յերգը։ Ուստի և կուլտուրական պրոցեսն այժմ բնորոշ և համզիսանում մեր շինարարության համար։ Դա կարող է ընութագրվել յերկու խոսքով. մենք խորտակեցինք պահանջի այն անիցյալ բացակայությունը, վորի մասին խոսում եյին իր ժամանակ ենդեւում և Մարքսը՝ իբրև սոցիալական հեղափոխության վատթարագույն խոչընդոտի, վատթարագույն թշնամու մասին։ Այժմ մենք պարզասիրա, բացձակատ կարող ենք ասել թե թշնամուն և թե բարեկամին, վոր մենք հասել ենք կուլտուրական հեղափոխության աստիճանին, յերբ հաղթահարված ե զյուղացու, բանվորի և բոլոր աշխատավորների կուլտուրական պահանջների բացակայությունը։ Դա — մեծագույն նվաճումն և այն յերկրի, վոր ընդամենք ունի պրոլետարական դիկտատուրայի տռաջին տասնամյակ։ Մի յերկիր, վոր ընդամենք հինգ կամ վեց տարի վարում ե

տնտեսությունն ավելի կամ պակաս նորմալ կերպով, վոր միայն հինգ կամ վեց տարի կարող եր իր ըոլոր ույժերը, իր բովանդակ կամքն ուղղել շինարարության կողմը, վոր կարողացավ արդեն հաղթհարել այդ ամենազլավոր արգելքը՝ խորհրդային քաղաքացու ամբողջ հոգեբանության բարձրաստիճան վերելքի ճանապարհին, — այդ յերկիրը, կրկնում եմ, հաստատ վոտք և դրեւ կուլտուրական հեղափոխության ուղիի վրա:

### Ազգային խաղաղությունը – Խորհրդային իշխանության նվաճումն է

Իսկ ինչնում և արտահայտվում կուլտուրական հեղափոխության պրոցեսը:

Նախ սի քանի խոռք այն ազգային խաղաղության առթով, վոր հանդիսանում և թե մեր շինարարության և թե մանավանդ այն համերաշխության, համամարդկային աշխատանքային յեղայրության նախադրյալ, վորոնք մեր հեղափոխության նպատակն են, վորոնք անյերեակայելի յեն առանց հաղթահարելու շավինիզմի, մեկուսացման, փոխազարձ անվստահությունները, վոր ընորոշ ելին նախկին կառավարությունների համար, վորոնց աջողվում եր պատվաստել այդ թույնը, շովինիզմի թույնը նույնիսկ աշխատավորների վորոշ խավերին, չայտնի յե արդեն, վոր այդ հիվանդությունը մտնում և փթերով, իսկ դուրս և գալիս մըսիսիներով: Խորհրդային իշխանության և մեր կուսակցության ջանքերն այստեղ հետամուտ ելին առաջին հերթին վերացնել այդ ազգային սահացում – մեկուսացումը, վոր մեզ ժառանգություն թողին նախկին անիծյալ ոեժիմները, և հաստատել կայուն ազգային խաղաղություն:

Այդ խաղաղությունն ապահովված և մեզ մոտ մեր պետական հաստատությունների ամբողջ սիստեմով, այդ հաստատությունների աշխատանքի ամբողջ կառուցվածքով, և վոչ թե մեր կարմիր բանակի գոյության փաստով, վոր արթուն պահպանում և նաև ներքին խաղաղությունը:

Լասան ասում եր, վոր յեթե զրավոր սահմանադրությունը կորչի մի գեղեցիկ որ, համենայն դեպս այդ սահմանադրական հարաբերությունները չեն խախավի, վորովհետև վճռական նշանակություն ունեն հենց այդ իրական հասարակական հարաբերակություն ունեն հենց այդ իրական հասարակական հարաբերությունները: Նույնը կարելի յե ասել նաև մեր ազգային խա-

ղաղության վերաբերմամբ. Հինգի կարմիր բանակը, համենայն դեպս հաստատում ազգային խաղաղության հարաբերությունները, վոր բերեց Խորհրդային իշխանությունը ու ամրապնդեց Անդրկովկասյան ֆեդերացիայի սիստեմը, վոր յես անվանեցի Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական կոոպերացիա, — այդ հարաբերությունները կմնան անգրգվելի:

Դա հսկայական նվաճում և մեր «Բալկաններում»: Իսկ ինչնումն և կոնկրետ տրտահայտվում այդ նվաճումը: Յես կվերցնեմ միայն մեր պետական կյանքի մի քանի կողմերը. որինակ՝ տպարատի ազգայնացումը:

Այդ հարցն ըստ եյության հանդիսանում և ինտելիգենցիային վերաբերող հարց, վորովհետև մեր ապարատում մեծ մասամբ աշխատում են ինաւելիգենտ ույժեր: Ինարկե, բնիկ ազգաբնակության համար պետք և ստեղծվեն նրա իրավունքների ըստ ամենայնի ոգտագործության պայմանները: Ենինը մի անգամ հարցրեց մի վրացի աշխատավորի. «Ինչպես և կատարված ձեզ մոտ ազգայնացումը: Կարող և արդյոք վրացի գյուղացին գալ կայարան և, բացատրվելով իր լեզվով, տոմսակ գնել ու վագոն նստել»: Թվում ե, թե դա դատարկ բան է, բայց հենց զրա մեջն և ամենաբարդ հարցի հանձարեղ ու միաժամանակ պարզ առաջադրումը. արդյոք ամեն ինչ այնպես և արված, վորպիսի վրացի գյուղացին կարողանա քաղաքում և կայարանում բացատրվել մայրենի լեզվով: Ինարկե, այժմ այդ տեսակետից շատ բան և արված, ահա որինակ, ինչպես և զրված գործը Անդրկովկասյան յերկաթուղիներում: Մեր յերկաթուղիները բաժանված են յերեք ուղերածներ. արևմտյան – վրացական, արևելյան – աղբբեշանյան, և հարավային – հայկական: Իսկ ինչպիսի յե զրությունն այդ ուղերածիներում: Վրացական յերկաթուղագիծը միանգաման ապահովված և պետական լեզվին տիրապետող աշխատավորներով: Հայկական ուղերածնում այդ տեսակետից գործը մի փոքր թույլ ե, թեև ծառայողների  $94\%$  պատկանում և հայ ազգության: Աղրբեշանի ուղերածնում գործն ազգային տեսակետից թույլ ե. բայց այստեղ ել մենք գործ ունենք պետական ժառանգության հետ, վոր աստիճանաբար վերացվում ե. կազմակերպվում են համապատասխան դաօքնթացներ և կամաց-կամաց յերկաթուղին ստանում և թուրք յերկաթուղային բանվորներ:

Վերցնենք բանակը: Նույնիսկ այստեղ մենք փորձ արինք մոտենալ այն բանի մաքսիմումին, վոր պահանջվում և մեր ազգային քաղաքականությամբ:

իսկ ինչ վերաբերում ե արհմիությունների «ազգայնացմանը», այստեղ, իհարկե, մենք փաս: Մենք այդ բնագավառում ազգայնացումը գործապել պետական միջոցներով չենք կարող, չպետք ե անենք և չենք անի:

Բանվոր դասակարգի արհեստական ազգայնացումը, դա—վրացական և ուրիշ ազգերի մենշելիների գործն ե, բայց վոչ կոմմոնիստների գործը: Բանվոր դասակարգի ազգայնացումն որդանական պրոցես ե: Որինակ՝ մել ե ավելացնում Վրաստանի քաղաքների ազգաբնակության թիվը: Հարկավ, վրացական գյուղերը մարդիկ են մատակարարում քաղաքներին՝ թիֆլիսին, Քութայիսին, Փոթիին և այլն:

Այստեղ կատարվում ե վրացական պրոլետարիատի բնական աճում առանց վորեւ ըսնության, առանց վորեւ փորձի՝ արհեստականապես գերակշռություն աալու վրացական տարրերին քաղաքում: Թիֆլիսում, ուր վրացիները փոքրամասնություն ելին, վրացական տարրը ներկայումս ուժեղանում ե: Միթե դա առաջ ե յեկել Խորհրդային իշխանության արհեստական միջոցներով: Այդպես կարող են խոսել միայն դաշնակցականները: Մենք վոչ մի խոչընդու այստեղ չեցինք գնում, բայց ի նկատի ունենալով վոր գյուղն ե մարդիկ մատակարարում քաղաքին, իսկ մեր քաղաքը շրջապատում են վրացական գյուղեր, ուստի վրացական տարրը աճում ե և՝ դրան համապատասխան՝ աճում ե վրացական պրոլետարիատը:

**Կարմիր բանակը — խորհրդային հաղաքացիականության դպրոցն ե**

Կուլտուրական հեղափոխության գործոններից թույլ տվեք ինձ կանգ առնել համառոտակի Կարմիր բանակի վրա:

Թող վոչ փոքրն տարրուինակ չմվա, վոր բանակը — ճնշման, ըսնության, հարձակման կամ պաշտպանության մարմինը — ընկնում ե կուլտուրայի տարրերի սիստեմի մեջ: Կարմիր բանակն, անտարակույս, կուլտուրայի գործոն ե: Նա գործոց ե գյուղացիների և բանվորների համար, վորոնք անցնում են բանակի մեջ միայն ուղղմական գիտության, այլ և խորհրդային քաղաքացիականության գպրոց: Նրանք վերջ են գնում տարրական ու քաղական անդրագիտության և գյուղ են վերադառնում իրեւ կատարյալ խորհրդային քաղաքացիներ:

Ի՞նչ ունենք մենք Կարմիր բանակի մեջ 1927 թ.: Բանակն անցավ անտեսական վատ դրության, փոքր ուժիկի հետ կապված վորոշ ճնաժամային ետապներ: Իհարկե, մենք չենք կարող ասել, թե Կարմիր բանակն այժմ ապահովված ե ամեն տեսակիտից, բայց խոշոր բարելավում մենք կարող ենք անձանագրել:

Այժմ՝ բանակի ներքին կառուցվածքի, ներքին մթնոլորտի մասին: Մեր աջակցությամբ ու աշխատանքով բանակը մշակել ե արդին վոչ միայն իր ուղղմական գեմքը, այլի ի հայտ և բերում իր կուսակցական կերպարանքը: Սկսած հրամանատարից մինչև շաբաթյին կարմիր բանակայինը՝ նա միաձույլ ե կոմմոնիստական միջուկով:

Մենք կարող ենք պարծենալ այժմ վոչ միայն նրանով, վոր ունենք Կարմիր բանակ—մեր թշնամիներին սպառնալիք, այլ վոր մենք ունենք գյուղացիական ազգաբնակության հետ ամուր կապված կարմիր բանակ: Վերջին զորախաղերը պարզ ցույց տվին այդ: Իրենք գյուղացիք ասում ենին, թե նրանք յերբեք տեսած չեն այդպիսի «զինվորներ», վորոնք վոչ միայն ծանր բեռ գառնային գյուղի համար, այլ ըստ ուցյեների նարարավորության ողնոյնին տնտեսությանը, վերականգնելով քանդված ցանկապատը և այլն:

### Կրթական հարցեր

Ըսկերներ, միացած հարցերից թույլ տվեք կանգ առնել միմիայն կրթական հարցերի վրա: Ի՞նչպիսի աշողություններ ունենք այդ տեսակետից: Ռուսաստանում հազար բնակչին ընկնում է 99 սովորող, Ռուսայինայի հանրապետության մեջ՝ 102, Բելոռուսիայում՝ 118, Անդրբեղեցիայում՝ 119, Ռւզբեկստանում՝ 41 և Թուրքմենստանում՝ 53: Այդպիսով Անդրբեղեցիան ըստ առաջին աստիճանի տարրական գլուխում սպորտների քանակություն գրավում ե առաջին տեղը Միության մեջ: Մեզանից հետո գալիս ե Բելոռուսիան, ապա Ռուսայինայն և վերջապես Ռուսաստանը: Ռուսաստանում պետք ե ուշադրության առնել այն բաղմաթիվ յետամնաց ավտոնոմ ժողովուրդներին, վորոնք այժմն միայն մասնակից լինում կըթական հաստատությունների սիստեմին:

Խոսելով կուլտուրական նվաճումների մասին, մենք պետք ենք համագումարում առանձնապես մատնանշենք այն լծակը, վոր շրջում և մեր տգիտության ու խավարի դարավոր շերտերը—թուրքական նոր այբուբենը (ծափահարություն), վորի պիտույք համդիսանում են մեր ընկեր Աղամալի-ողլին (ծափահարություն) և Աղբբեջանի Խորհրդային հանրապետությունը:

Մեր կուլտուրական հեղափոխության ընթացքում վերջին տարիները մենք բաղկալիցինք մի հաստատության, վոր իրեն համարում եր ավտոնոմ հաստատություն: Յես խոսում եմ մեր համարաբանի մասին: Մեր կուսակցական կազմակերպությունները, ից թե, մի փոքր ուշ դարձրին ուշադրություն դրա վրա և բարենորոգում մտցրին համալսարանի մեջ: Խոչվիսի՞ հետևանքներ ստացվեցին այդ բարենորոգումից: Ինարկե, ծիծաղելի յե ասել, թե վորեւ բարենորոգում կարող ե անցնել անհիվանդագին կերպով:

Ամեն տեղ այդպես եր: Յեթե մենք վախենայինք ձեռք տալ բուրժուական սեփականությանը, արդեն կարգավորված ու արտգորեն աճող բուրժուական անտեսությանը, յեթե մենք յերկյուղ կրեյինք մոտենալ դրսն հեղափոխական նժոտարով, ինարկե, մենք վեհ մի հեղափոխություն չեյինք ունենա: Մենք չվախեցանք վորոշ ծախքերից, վորոնք անխուսափելի յեն նաև համալսարանի բարենորոգման ժամանակ. Յեվ յես կարծում եմ, թե ներկայում արդեն յեղած հետեանքներն արդարացրին մեր ձեռնարկները:

## Մ Ե Ր Ա Մ Ո Ւ Լ Բ

Մամուլի ասպարեզում մենք անկասկած մեծ տուաջադիմություն ենք արել: Մենք ունենք 41 թերթ: Տիրաժը 1926 թ. հասնում եր 188.000-ի, հետո 7 թերթ կրատեցինք, թերթերի քանակն իշեցրինք 33-ի, բայց այսուամենայնիվ տիրաժն աճեց և հասավ 267.390-ի: Անհրաժեշտ ե շեշտել զյուղացիական մամուլի աճը: Խորհրդային աջքը հանգատանում ե բառի բուն նշանակությամբ և խորհրդային սիրտը հրճվում, յերբ կարդում ես, վոր վրացական «Ախալի Սոփելի» զյուղացիական թերթը տարածվում է 55,000 որինակ: Դա անհնար եր յերևակայել վոչ ցարական, վոչ ել մենշեկյան շրջանում: Վոչ ցարի, վոչ ել մենշեկյան որոք այդպիսի թափ չկար: Նույն պատկերն են ներկայացնում մոտավորապես նաև Աղբբեջանի և Հայաստանի զյուղացիական թերթերը:

Թերթերի աճի հետ միասին նկատվում ե նաև բան-գյուղ-թղթակցային շարժման աճը: Դա այն բանակի աճն ե, վոր գուրս ե յեկել բանվոր դասակարգի և գյուղացիության շարքերից, վոր իրեւ գենք ձեռքն ե վերցրել զրիչը և գրում ե մեր թերությունների մասին: Դա խորհրդային կուլտուրայի և հասարակայնության նվաճումն ե, վոր խոր արմատներ ե զցել մեղնում: 1926 թ. սկզբում մենք ունեյինք 11,449 բանգյուղթղթակից, իսկ 1927 թվի վերջում—17,734. ավելացել ե 6,285 հոդի:

Բանգյուղթղթակցային շարժումն աճել ե նաև վորակով: Այժմ լուրջ քննադատությունը սովորական ե դարձել արգեն բան-գյուղթղթակիցների համար: Այժմ այդ աշխատավորներն իրենց գրչով ոգնում են մեզ շտկելու այն, ինչ վոր փչացնում ե այս կամ այն բյուրոկրատը, կաշառակիրը, խորհրդային սիստեմին ողի նման կպած ստահակը: Այժմ բանգյուղթղթակիցը խորհրդային պետության, խորհրդային տնտեսության կառուցողների բանակի որգանական մասն ե, ոգնում ե շինարարության ուսցինալացման:

Վերցրենք մյուս ըրջանը: Շատ չի անցել այն որից, յերը մեղնից շատերը կարծում եյին, թե պրոլետարական գրողները ձանձրացուցիչ, բանի պետք չեկող մի հասարակություն ե, և կուսակցություն վերաբերմունքն ել դեպի պրոլետարողները բավականին ստուն եր: Վերջին յերկու տարում, պետք ե ասենք, պրոլետարական գրականությունը նվաճում ե իր իրավունքները: Թե ստեղծագործության, թե պրոլետարիատի պահանջներին հարմարվելու մեջ աջողություն են ձեռք բերել: Ինարկե, պրոլետարողները մեր գրականության մեջ շատ մեծ գործ չեն կատարել զեռ: Նրանք ազգեցության խոշոր բաժինը զիջում են զեռ հին հոսանքների վարպետներին, բայց այստեղ ել մենք ունենք ապագայի լուսու շողերը թե ձեի, թե լեզվի և թե այն թեմաների տեսակետից, վոր ընտրում են պրոլետարողներն իրենց ստեղծագործության համար:

Միաժամանակ պետք ե նշել, վոր կուսակցության ազգեցությունը պրոլետարողների վրա չափազանց քիչ ե: Այդ գրողների հասարակությունը մեծ մասամբ կոմյերիտական ե:

Յերբեմն այդպիսի կոմյերիտական գրողը աջող նվաճումներ ե անում ձեի և լեզվի տեսակետից, բայց հաճախ տատանումների մեջ ընկնում: Յերբեմն նա յերգում ե հին վրաստանը, յերգում ե իր նախնիքների ասպետներին և զրան գուգընթաց յերթերը:

գում Համաշխարհային Հոկտեմբերը: Այդ յերկությունն առաջ է գալիս նրանից, վոր պրոլետգրողները չեն գտնվում կուսակցական կազմակերպությունների մշտական հոգացողության և աղդեցության ներքո:

Մեր հավատակն է լինելու այս ասպարեզում մեր թեր տակ առնել այդ յերիտասարդ գրողներին, առաջ առնել մեր յետեից, շրջապատել նրանց վոչ միայն համակրանքով, վոչ միայն հարվածու նրանց սիալները, այլև սովորեցնել նրանց: Խոդիրն այստեղ մանկավարժական հ.՝ հարվածել այնպիս, վոր այդ հարվածը նրանց համար խրատական և ուսանելի լինի, ուղղի նրանց և նպաստի նրանց հետագա աճին:

### ԱԵՆԻՆԻԳԱՎԻ ՊՐՈԵՒ ՏԱԼ

Յես կանգ չեմ առնելու բոլոր աշողությունների վրա թերուկ ժողովրդական կապի ասպարեզում, վորն այնքան խոշոր կուլտուրական ծառայություններ և մատուցում ազգաբնակչությանը, Յես կմատնամշեմ միայն մեր ցանցով ուղարկվող փուտային թղթակցությունների հոկայական աճը: Դա մեր կուլտուրական աճի և տնտեսական ույժի անուղղակի արտացոլումն և Անցյալ տարվա ընթացքում, որինակ, ուղարկված և 46 միլիոն հասարակ նամակ, 34 միլիոն պարբերական մամուլ, 7 միլիոն գրանցված թղթակցություն, ապահովված նամակներ և փոստային փաթեթ, 8 միլիոն հեռագիր: Այսպես ընկ. ընկ. կվանտալիսնու կամարառու վարչության ներքո գտնված ցանցով ուղարկված և ընդունեն 96 միլիոն թղթակցություն:

Այժմ ուաղիոյի մասին. ներկայումս մենք ուաղիոկայաններ ունենք Անդրկովկասի բոլոր մայրաքաղաքներում. դրա հետ միասին ունենք նաև 200 պետական ուժեղ զյուղական ուաղիոկետեր և ավելի քան 3000 սիրողների ուաղիոկետեր: Այս թվերը մշտական չեն, նրանք շարունակ ավելանում են:

Վերջապես այս բաժինն ավարտելու համար պետք է նշել այն բանավեճը, վորը վերջին ժամանակներս առաջ և յեկել այսպես կոչված աղգային կուլտուրայի առթիվ:

Այն բոլորն, ինչ վոր ձշմարտություն և կուսակցության և նրա զեկավար մարմինների համար, անպայման պետք է կասկածի յինթարկվի մեր ուղղուցիչի կողմից:

Ոպողիցիան հարձակման յենթարկեց մեր կուսակցության ազգային վողջ քաղաքականությունը, հարվածների տակ առաջ կուսակցության քաղաքականության բոլոր սկզբունքներն աղգային կուլտուրայի շրջանում:

